

Atenagrowt'iwnk' Azgayin Žoovoy / Azgayin Patriark'aran

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Azkayin Badriarkaran. Atenagrowt'iwkn' Azgayin Žoovoy / Azgayin Patriark'aran. 18..-19...

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ՊԱՇՏՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1888 ԱՄԻ

ՆԻՍՏ ԺԲ.

17 ՄԱՐՏ 1889



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԵԱՆ

1889

412 33559

1888 = 12

ԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա.Զ.Ա.ՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

2008-123517

ACC 1993004837

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

Տօքթ . Յարութիւն էֆ . Թիրեաքեան Ա . Ատենապետ	
Քրիստոստուր	» Զազարոսեան Բ . »
Մարկոս	» Աղաբէգեանց Գ . »
Մկրտիչ	» Մէլիքեան Ա . Ատենադպիր
Աւետիս	» Թնկրեան Բ . »
Արփիար	» Արփիարեան Գ . »

Ձեռնհասութեան Դիւան

Յովսէփ Վարդ . Այվազեան Ատենապետ
 Յովսէփ » Սարաճեան
 Մարկոս էֆէնտի Աղաբէգեանց

Դաստիարակութեան Դիւան

Ռէթէոս էֆ . Պէրպէրեան Ատենապետ
 Մկրտիչ » Մէզպուրեան
 Համբարձում » Ալաճաճեան

Կայուածոց Դիւան

Քրիստոս . էֆ . Զազարոսեան . Ատենապետ
 Յակոբ » Արշակ
 Երամ » Ճէնազեան

Համարակայութեան Դիւան

Յակոբ էֆ . Պարոնեան Ատենապետ
 Կարապետ » Սըվաճեան
 Գօղոս » Թորգոմեան

Յարաբերութեան Դիւան

Տիգրան էֆ . Եռասուֆեան Ատենապետ
 Յակոբ » Գուրգէն
 Նշան » Փափազեան

Իրաւասութեան Դիւան

Միքայէլ էֆ . Մամիկոնեան Ատենապետ
 Արփիար » Արփիարեան
 Աւետիս » Թնկրեան

Ախաճեռնութեան Դիւան

Յովհաննէս էֆ . Նուրեան Ատենապետ
 Միհրան » Զօպանեան
 Բարսեղ » Հալաճեան

Խմբագրութեան Դիւան

Յովհաննէս Վր . Արշարունի Ատենապետ
 Յակոբ էֆ . Պարոնեան
 Ռէթէոս » Թաղէոսեան

ԱՂԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1888 ԱՄԻ

ՆԻՍՏ ԺԲ.

17 ՄԱՐՏ 1889



ՆԱԽԱԳԱՀ. — Գեր. Տ. Գարեգին Եպիսկոպոս Սրբաանձտեանց (Առժամեայ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տօքթ. Յ. Էֆէնտի Թիրեաքեան.

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. — Երկամեայ Համարատուութիւն նախորդ կրօնական ժողովոյ.
- Բ. — Առաջարկութիւն նախորդ Քաղաքական ժողովոյ Սովետոյ դադարեալ Յանձնաժողովոյ յաւելեալ գումարն արհեստական կրթութեան յատկացնելու մասին.
- Գ. — Ծրագիր առաջնորդական վիճակաց վերակազմութեան. (Տեղեկագիր Վարչութեան).



Ի բացակայութեան Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, Ատենապետ Էֆէնտի առժամեայ նախագահութեան կը հրաւիրէ գեր. Տ. Գարեգին Եպիսկոպոսն Սրբաանձտեանց եւ ատեանն կը բանայ ժամ 7 1/2ին ի ներկայութեան 38 Երեսփոխանաց որոց թիւն ի վերջոյ 47ի կը յանգի:

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1

Բացակայութիւն

Եկեղեցական Երեսփոխաններէն Արժ. Տ. Յովհաննէս Վարդապետ Արշարունի անձ-

նական տկարութեամբ ժողովոյ այսօրեայ նիստէն բացակայ մնալն գրով հաղորդած լինելով Դիւանին, իբր օրինաւոր բացակայ կարճանագրուի ներկայութեան տումարին մէջ.

2

Առաջարկութիւն Յ. Գուրգէն ԷՖ.ի Օրբոց Թարգմանչաց յիշատակի տարեկան տօնն ի դպրոցս Թուրքիոյ կատարուելու մասին

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ատենական Թըղթոց մէջ ունիմք մեր պաշտօնակիցներէն Յակոբ Գուրգէն Էֆէնտի առ կրօնական ժողովն ուղղեալ հետեւեալ առաջարկութիւնը:

Առաջարկութիւն Առ. Պատ. Կրօն. Ժողովն Ազգ. Կեդր. Վարչութեան

Հայաստանեայց Եկեղեցին ի սկզբանէ անտի կը տօնէ Ս. Թարգմանչաց յիշատակն ի սահմանեալ աւուր: Յանկալի է որ այդ նուիրական տօնն ո՛չ միայն յեկեղեցիս, այլ եւ ի համօրէն դըպրոցս Հայոց Թուրքիոյ՝ իբրեւ տօն դըպրոցաց՝ կատարուի ամ ըստ ամէ հանդիսաւոր եղանակաւ, որպէս կը կատարուի առ Հայս Ռուսիոյ չորս տարիէ ի վեր, յանեղծ յիշատակ մեր պանծալի նախահարց, ազգային գրաւոր մատենագրութեան եւ սրբազան դպրութեան հոյակապ Վարդապետաց:

Կառաջարկեմ որ Կրօն. Ժողովն, ի հարկին Ուսումնական Խորհրդոյ հետ խորհրդակցելով, տնօրինէ զարժանն յառաջիկայ առթիւ:

**Ազգային Երեսփոխան
Յ. Գուրգէն**

15 Մարտ, 1889
Կ. Պօլիս

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն առաջարկութեան գիրն ըստ օրինի կը յղեմք Կրօնական Ժողովոյ առ ի տալ զիւր կարծիս:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Եթէ Ժողովը կը հանի, երկու խօսքով բացատրեմ իմ սոյն առաջարկութեան ոգին:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր տալիք բացատրութիւններն, Գուրգէն էֆէնտի, վերապահեցէք Կրօնական Ժողովէն գալիք տեղեկագրոյն. այժմէն խնդրոյն մէջ մտնել ներելի չէ:

Ձայս ասելով Ատենապետ էֆէնտի Կրօնական Ժողովոյ ԿՆՅՆԵ Գուրգէն Յ. էֆէնտի առաջարկութեան գիրն առ ի տալ զիւր կարծիս:

Առաջարկութիւն Ղազարոսեան Ք. ԷՖէնտի Երրորդ վիճակաւ դադարեայ Երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութիւն կատարելու մասին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Օրինական դիտողութեան մը համար խօսք կուզեմ: — Պէտք է գիտնալ թէ Գ. վիճակի Եկեղեցական, Կեդրոնական եւ Փաւառական Երեսփոխանաց երկամեայ պաշտօնավարութեան շրջանն ըստ օրինի կը լրանայ յառաջիկայ մայիս 1ին: Ուստի պէտք է այս մասին հարկ եղածն գրել Ս. Պատրիարք Հօր որպէս զի նոր ընտրութեանց հրահանգներն փութացնէ: Այս առթիւ չի մոռնամ յիշեցնել նաեւ թէ խել մը պակասեալ Երեսփոխաններ ալ կան, որոց տեղ եւս նոր ընտրութիւն կատարել հարկ է:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանն Ղազարոսեան էֆէնտի սոյն օրինական առաջարկութեան գործադրութեան համար պէտք եղածըն պիտի գրէ Ս. Պատրիարք Հօր:

Դիտողութիւն Սուրէնեան Ա. ԷՖ. Ժողովոյ ատենագրութեանց հրատարակման յապաղման մասին

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Օրինական դիտողութեան մը համար ես ալ խօսք կուզեմ:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Դուք ալ խօսեցէք, Սուրէնեան էֆէնտի:

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Փափաքելի է որ Ժողովոյս իւրաքանչիւր նստի ատենագրութիւն մինչեւ յաջորդ նիստ՝ տպագրեալ եւ պատրաստ՝ հասնին Երեսփոխանաց ձեռքը: Վասն զի կը տեսնենք թէ այս ատենա-

գրութեանց հրատարակման յապաղումը զանազան անտեղութեան տեղի կուտայ . . .

ՁԱՅՆԵՐ. — (Ընդմիջմամբ) Ինչպէ՞ս :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Նախ՝ երբ նստի մը պաշտօնական Ատենագրութիւնն չի հրատարակուիր ժամանակին, բնականաբար ատեն անցնելով Երեսփոխանք կը մոռնան իրենց ըսած խօսքերն եւ ի պահու Ատենագրութեանց վաւերացման, չեն կրնար ուղղել անճիշդ կէտերն, եւ երկրորդ՝ ազգային թերթերն որք ժողովոյս նկարագիրն երկրորդ օրն կը հրատարակեն, շատ անգամ խեղաթիւրեալ կերպով կ'ընեն այդ հրատարակութիւնն. եւ որովհետեւ Ատենագրութիւն չիկայ, բնականաբար եւ ընթերցողք այդ խմբագրական հրատարակութեանց տը պաւորութեան ներքեւ կը մնան : Ուստի կը խնդրեմ Դիւանէն որպէս զի ամեն ջանք ի գործ դնէ իւրաքանչիւր նստի Ատենագրութիւն ժամանակին հասցնելու համար, որպէս զի թէ՛ Երեսփոխանք կարենան յիշել իրենց խօսքերն եւ թէ լրագիրք՝ իւրաքանչիւրն իւր ըմբռնած եղանակաւ չի հրատարակէ զայն : Ծախուց մասին եւս կարծեմ առարկութիւն ընելու տեղի չիկայ, քանի որ, իմացածիս նայելով, Կեդրոնական Սընտուկը այժմ աւելի կանոնաւորապէս կը վճարէ եղել Ազգային ժողովոյ ծախուց յատկացեալ գումարն :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Ատենագրութեանց հրատարակութեան երբնակի յապաղման պատճառն ո՛չ Դիւանիս ոչ իւր Քարտուղարին եւ ոչ ալ Կեդրոնական Սնտուկին պէտք չէ վերագրել :

Իրաւ է թէ Դիւանն ժամանակին կը պատրաստէ ժողովոյ Ատենագրութիւնն, Կեդրոնական Սնտուկն աւելի կանոնաւորապէս կ'ընէ իւր վճարումներն, Տպարանի մասին եւս ըսելիք մը չունինք, սակայն եւ այնպէս շատ անգամ մեր կամքէն անկախ պատ-

ճառներով կը յապաղին այդ Ատենագրութեանց տպագրութիւնն

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. ԵՒ ԱՅԼՔ. — (Ընդմիջմամբ) Որո՞նք են այդ պատճառները :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Ատենագրութեանց տպագրութեան գործը Պատրիարքարանի կողմանէ նուազուրդի դրուած լինելով, իւրաքանչիւր Ծօրմաի դինն այն աստիճան ինկած եւ անհաւատալի աժանութեան մը հասած, է որ կարելի չէ այս գնով հրատարակի վրայ ուրիշ տպարան գտնել եւ հետեւաբար տպագրական գործին մղում տալու համար մինչեւ մէկ աստիճան կրնամք ծանրանալ մեր Տպագրիչին վրայ

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Ժամանակ մը ատենագրութեանց իւրաքանչիւր Ծօրման 280 դրշ. ի կը տպագրուէր :

ՁԱՅՆԵՐ — Այժմ ի՞նչ է :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — (Պատասխանելով) Այժմ 100 դրշ. է թուղթն եւ կազմն ալ Տպագրիչին վրայ լինելով :

(Զարմացման նշաններ)

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Դիտել կուտամ Մէլիքեան էֆէնտի թէ՛ իմ Ատենագրութեան օրով, յորում վըճարումներն ալ այսօրուան պէս կանոնաւոր կերպիւ տեղի չէին ունենար, դարձեալ եւ այնպէս ատենագրութիւնք ժամանակին կը տպագրուէին եւ կը հասնէին Երեսփոխանաց ձեռքը :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — (Պատասխանելով) Եւ ես, ի պատասխանի Սուրէնեան էֆէնտի, կը յայտարարեմ թէ իմ նախորդ Ատենագրութեան օրով, ոչ թէ մէկ կամ երկու,

այլ 15-20 Յօռմայէ բաղկացեալ ատենագր-
րութիւնն կրցած եմ հասցնել մէկ քանի օր-
ուան եւ մի եւ նոյն Տպարանին մէջ: Վսեմ.
Ստեփան Փաշա եւս, որ Ատենապետ էր այն
ժամանակ, կրնայ վկայել այս բանիս: Բայց
այն ժամանակ, ինչպէս քիչ մ'առաջ ըսի,
ատենագրութիւնք բարձր գներով կը հրա-
տարակուէին եւ բացառիկ վարձատրութիւն-
ներ ալ կըլար Տպագրչին:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Ի՛նչ որ է, կը
խնդրեմք որ ատենագրութեանց հրատարակ-
ման գործն աւելի կանոնաւոր վիճակի մը
վերածուելու համար Դիւանն բարեհաճի զար-
ժանն ի գործ դնել:

ԱՏԵՆԱՊԻՐ ԷՅ. — Շա՛տ լաւ:

5

Հարցում Սուրենեան Ա. ԷՅ. ի Տ. Մելքիսե-
ղեկ Արք-Եպիսկ. Մուրատեանցի քարոզու-
թեան առթիւ տեղի ունեցած ձերբակալու-
թեանց մասին

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Երկրորդ հար-
ցում մ'ալ ունիմ առ Վարչութիւն որ կը
վերաբերի Տէր Մելքիսեղեկ Ս. Արք-Եպիս-
կոսոսի քարոզի խնդրոյն:

Կիմանամք թէ երբ Գում-Գարուի ազգայ-
նոց կողմանէ երկու հանրագրեր կը պատրաս-
տուին եղել խնդրելու համար Պատրիարքա-
րանէն որպէս զի Տ. Մելքիսեղեկ Սրբազան
Մեծի պահոց մէկ կիւրակէն Մայր-Եկեղեցոյ
մէջ քարոզ խօսելու թոյլտուութիւն ընէ,
այդ հանրագրերն ստորագրել տուողնե-
րէն ոմանք Ոստիկանութեան կողմանէ ձեր-
բակալուելով Չկ ժամու բանտարկութեան կը
գատապարտուին, եւ մինչեւ իսկ ոմանց տու-
ներու մէջ խուզարկութիւնք տեղի կունե-
նան: Արդարեւ այս առաջին անգամն է որ
այսպիսի ցաւալի իրողութիւն մը տեղի կունե-

նայ, առաջին անգամն է, կըսեմ, որ Աստու-
ծոյ բանն լսել փափաքողք կը բանտարկուին:
Միթէ Կրօնական Ժողովոյ կողմանէ յիշեալ
բարձրաստիճան Եկեղեցականի քարոզչու-
թեան դէմ արգելք յարուցուած է. միթէ
Ժողովուրդն չունի՞ իրաւունք իւր վարդա-
պետին բանը լսելու համար հանրագիր ստո-
րագրելու: Ես չեմ հասկնար թէ ասոր մէջ
ի՞նչ յանցանք, ի՞նչ ոճիր կայ.....

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — (Ընդմիջմամբ)
Մե՛ք այսօր այդ խնդրոյն համար չե՛մք ե-
կած հոս Սուրենեան էֆէնտի:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — (Շարունակելով)
Այժմ, Ատենապետ էֆէնտի, կը փափաքինք
այս իրողութեան ստուգութեան մասին Վար-
չութեան բացատրութիւնն լսել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Եթէ Սուրենեան է-
ֆէնտի սոյն յայտնութիւնք ստոյգ են, ար-
դարեւ շատ ցաւալի է: Այլ ըստ որում Ձեր
Դիւանն ի պաշտօնէ տեղեկութիւն մը չունի
այդ մասին, եւ ըստ որում Վարչութենէն
ոչ ոք ներկայէ, որ պատասխանէ, ուստի
Սուրենեան էֆէնտի սոյն հարցումը ըստ օ-
րինի կը հաղորդեմք առ Վարչութիւն ի
տեղեկագրութիւն:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՅ. — Այս առթիւ դի-
տել կուտամ թէ՛ Վարչութիւնն պէտք է որ
իւր ներկայացուցիչն ունենայ Ազգ. Ժողո-
վոյս մէջ:

(Սոյն պահուն Քաղաքական Ժողովոյ
Վսեմ Ատենապետ Պէյն կը մտնէ ի Ժողովա-
սրահն.)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — (Առ Ատենապետ Պէյն
Քաղաքական Ժողովոյ) Ստոյգ է որ Տ. Մել-
քիսեղեկ Սրբազանի քարոզ խօսելուն առթիւ
Ժողովրդեան մէջ ձերբակալութիւնք տեղի
ունեցած են:

ՄԱՔՍՈՒՅԵԱՆ Ս. ՊԵՅ. — (Ատենապետ քաղ. Ժողովոյ) Այդ տարածայնութիւնն ստոյգ լինելէ շատ հեռի է. բանտարկուած մարդ չիկայ:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Բայց ես կրնամ հաստատել թէ՛ հանրագիր ստորագրող Բալուցիներէն մի քանիններն ձերբակալուած ու բանտարկուած են, եւ մինչեւ իսկ տուներ խուզարկուեր են: Ի՞նչպէս կրսէք թէ ձերբակալութիւն տեղի ունեցած չէ:

ՄԱՔՍՈՒՅԵ Ս. ՊԵՅ. — Քաղաքական Ժողովն այդ մասին ոչ գանգատ մ'ըրած է Բ. Դրան, եւ ոչ ալ տեղեկութիւն ունի խնդրէն: Իսկ մասնաւոր տեղեկութեանց նայելով, կը յայտարարեմ թէ ո՛ր եւ է ձերբակալութիւն տեղի ունեցած չէ:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — (Պատասխանելով) Այո՛, մեք ալ գիտեմք թէ այսօր բանտարկեալ չիկայ, բայց երկու երեք օրեր առաջ կար: Շատ ցաւալի է տեսնել որ Պատրիարքարանի քթին տակ ձերբակալութիւնք տեղի ունենան եւ ինք բնաւ տեղեկութիւն չունենայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Քանի որ, Սուրէնեան էֆէնտի, Վարչութեան Ատենապետն կը յայտարարէ թէ եղած տարածայնութիւնն ստուգութիւն չունի, այլ եւս խնդիրն երկարելու պէտք չիկայ:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — (Պատասխանելով) Վարչութեան վսեմ. Ատենապետ Պէյի յայտարարութիւնն ոչ թէ ի պաշտօնէ է, այլ անպաշտօն:

ՁԱՅՆԵՐ. — Ո՛չ, ի պաշտօնէ յայտարարեց:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — Պէտք է գիտնալ,

Սուրէնեան էֆէնտի թէ՛ Պատրիարքարանն ստիկանատուն չէ՛, Պատրիարքարանն իւր գործողութեանց սահմանն ունի որոյ մէջ միայն կրնայ գործել. իսկ Ոստիկանութիւնն իր ընելիքը ինք գիտէ: Այսու հանդերձ երբ Վարչութեան մը Ատենապետն այս Ժողովոյս մէջ կը յայտարարէ թէ՛ բնաւ ձերբակալութիւն տեղի ունեցած չէ, պէտք չէ՞ միթէ բաւ համարել այս յայտարարութիւնն...

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — (Ընդմիջմամբ) Իրաւ է թէ Պատրիարքարանը Ոստիկանատուն չէ, բայց միթէ կարելի չէ՞ որ անուղղակի կերպով ձերբակալութիւններ ընել տայ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — (Յուզեալ) Վարչութիւնն Ձեր ձեռքը խաղալիք չէք կրնար ընել, Սուրէնեան էֆէնտի: Չափերնիդ ճանչցէ՛ք...

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Կը բողոքեմ ես ալ Ձեզ դէմ, Նուրեան էֆէնտի: Պէտք է որ դուք Ձեր լեզուն չափաւորէք:

(Բողոքոյ ձայներ)

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — Եթէ կուզես, ամբաստանագիր բեր Վարչութեան դէմ:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Ես ամբաստանագիր բերելու պէտք չունիմ, քանի որ իբր Երեսփոխան հարցում ընելու ազատութիւնք կը վայելեմ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — Ա՛լ բաւական է. այդ աստիճան շարաշար չէք կրնար գործածել Ձեր Երեսփոխանական ազատութիւնն: Դուք Ձեր պաշտօնին բերմամբ փոխանակ ոյժ տալու Պատրիարքական Իշխանութեան, որ աւուր զայն տկարացնելու կողմն էք. այդ տեսակ Երեսփոխանութիւն եւ ոչ մէկ տեղ տեսնուած է:

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — (Ի ճայն գանգակի բարեկարգութիւնն վերահաստատելով.) Սուրէնեան էֆէնտի հարցում մ'ուղղեց առ վարչութիւն որ տուաւ հարկ եղած բացատրութիւններն : Հետեւաբար խնդիրն այլ եւս փակուած պէտք է նկատել :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Ի՞նչպէս կ'ըսէք թէ փակուած է խնդիրն , Ատենապետ էֆէնտի Միթէ գոհացուցիչ կը նկատէք վարչութեան կողմանէ տրուած հակիրճ տեղեկութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — վարչութեան Ատենապետ Պէյի տուած բացատրութեամբ խնդիրն այժմ փակուած կը նկատեմք : Եթէ հարցման տէրն գոհ չէ , ազատ է գրաւոր հարցապնդում բերելու :

ՁԱՅՆԵՐ . — Այո՛ , այո՛ :

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — Ուրեմն , Տեարք , կ'անցնիմք ատենական միւս թղթոց :

6

Ելմտացոյց 1888-89 եւ 1889-90 ամաց Ազգ. պեղրոնական Սնտուկի եւ Տեղեկագիր Թաղաքական Ժողովոյ .

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — Թաղաքական Ժողովըն Պատրիարքարանի 1888-89 եւ 1889-90 տարիներու Ելմտացոյցն հանդերձ իւր տեղեկագրով ներկայացուցած է Ժողովոյս ի վաւերացումն :

Կը հրաւիրեմ Ատենադպիր էֆէնտին ընթեռնուլ Տեղեկագիրն (1) :

(1) Ելմտացոյցն տես ներկայ ատենագրութեան ետին . Մ . Դ .

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ .

Ազգային Ժողովոյ կողմէ քուէարկեալ նախընթաց 1886-87 եւ 1887-88 տարիներու ելմտացոյցին գործադրութեան պայմանաժամը կը լրանար անցեալ Սահմանադրական տարեշրջանին վերջն եւ Քաղաքական Ժողովը նոր Ելմտացոյցը ծրարելու եւ ներկայ տարեշրջանիս սկիզբն Պատկ. Ժողովոյդ որոշման ենթարկելու համար ձեռնարկած էր նախապատրաստութեանց՝ ստանալով Տնտեսական Խորհրդէն հարկ եղած տեղեկութիւններն Կեդր. Մնտուկի Ելմտական վիճակին վրայ , սակայն Պատրիարքական ընտրութեան խնդրոյն հետ վրայ հասնելով նաև ուրիշ կարևոր խնդիրներ եւ հարկ դատուելով միանգամայն նորընտիր Ամեն . Ս . Պատրիարքի կարծիքն եւ հաճութիւնն ստանալ նոր Ելմտացոյցին նկատմամբ՝ յապաղեցաւ անոր պատրաստութիւնն , եւ հետեւաբար մինչև տարւոյս Յունվար ամսոյ վերջն գործադրուեցաւ արդէն հաստատեալ Ելմտացոյցն . իսկ 1888-89 եւ 1889-90 տարիներու Ելմտացոյցին պատրաստութիւնն աւարտելով՝ Փետրվար ամսոյ սկիզբէն՝ առժամեայ կերպով գործադրութեան դրուեցաւ ց'հաստատութիւն Ազգ. Ժողովէդ .

Քաղաքական Ժողովն ահաւասիկ կը մատուցանէ նոյն Ելմտացոյցն Պատկ. Ժողովոյդ՝ քանի մը բացատրութիւններ տալով ինչ ինչ կէտերու վրայ .

Ինչպէս կը տեսնուի , ներկայ Ելմտացոյցն 571,700 զրշ. մուտք եւ 523,500 զրշ. ելք նշանակած է՝ 48,200 զրշ. ի հասոյթից առաւելութեամբ , որ սահմանուած է դիմաւորելու որ եւ է հասոյթի նուազում , եթէ երբէք տեղի ունենայ ,

որով նոր Ելմտացոյցն՝ նախորդին վրայ մտից կողմէն 12,930 զրշ. պակաս հասոյթ և ելից կողմէն 51,000 զրշ. պակաս ծախք ենթադրած է .

Հասուծից կարգին մէջ՝ Գաւառական Մուգարայի տուրքն 20,930 զրշ. պակաս անցած է՝ սոյն հասոյթն ամբողջապէս չդանձուելուն պատճառաւ . Անցագրի հասոյթն 20,000 զրշ. պակաս նշանակուած է գոյացեալ արդեանց քանակութեան հաշուով . Իսկ ուրիշ քանի մը հասոյթք, որք են Առ ու ծախի Իլմուխապէր 20,000 զրշ.ի, Դիւանական և Դատական հասոյթք միացեալ՝ 1000 զրշ.ի, Կոնդակագին 3,500 զրշ.ի և պաշտօնաթուղթ և ծանուցագիրք միացեալ՝ 3,500 զրշ.ի առաւելութեամբ նշանակուած են, գոյացեալ արդեանց քանակութեան հաշուով .

Ծախուց կարգին մէջ պաշտօնէից յատկացեալ գլխոյն վրայ՝ նախորդ Ելմտացոյցին հետ բաղդատմամբ 10,200 զրշ.ի վերագիր մ'ընել հարկ դատուած է՝ յաւելցնելու համար տասն երեքի չափ պաշտօնէից թոշակներն, որոց աշխատութիւնք՝ ըստ աստիճանի իրենց պաշտամանց՝ արժանի դատուած են վարձատրութեան .

Իսկ նպաստի ամսականք և նպաստք կարօտելոց՝ միացեալ՝ 16,000 զրշ.էն 12,000 զրշ.ի, Յարաբերութեան ծախք 14,000 զրշ.էն 12,000 զրշ.ի, հեռագիր և թղթատար 10,000 զրշ.էն՝ 7,000 զրշ.ի, գրական պիտոյք 8,000 զրշ.էն 6,000 զրշ.ի, տպագրութիւնք 8,000 զրշ.էն 4,000 զրշ.ի, Ազգային ժողով 25,000 զրշ.էն 20,000 զրշ.ի, Հովուական ծախք 24,000 զրշ.էն 20,000 զրշ.ի, Կրթական ծախք 24,000 զրշ.էն 20,000 զրշ.ի, կարասի և նորոգութիւնք 10,000 զրշ.էն

6,000 զրշ.ի, հանդերձագին 5,500 զրշ.էն 4,500 զրշ.ի, զանազան և պատահական ծախք՝ միացեալ 13,000 զրշ.էն 10,000 զրշ.ի, Հաւաքչաց ամսականք և տասանորդք 19,200 զրշ.էն 14,000 զրշ.ի զեղջուած են, անփոփոխ պահուելով միւս ծախուց գլուխներն .

Քաղաքական ժողովն Պատկ. ժողովոյդ որոշման ներկայացնելով սոյն Ելմտացոյցն՝ աւելորդ չհամարիր յաւելուլ նաև որ պտարաստ է ի հարկին պէտք եղած լուսարանութիւններն տալու .

Մնամք յարգանօք

Ի դիմաց Ազգային Վարչութեան Քաղաքական ժողովոյ

Ատենադպիր

Ատենապետ

Կ. Սըլիմեան

Ս. Մարտուեան

16 Մարտ 1889 Կ. Պօլիս .

ԱՅՆԵԱՊԵՑ ԷՅ . — Սոյն տեղեկագիրն եւ Ելմտացոյցն ատենագրութեան մէջ անցնելով հանդերձ՝ պէտք է երթայ ըստ օրինի ի նախաքննութիւն . Այլ ըստ որում Համարակալութեան մնայուն Դիւան չունիմք, ուստի կառաջարկեմ որ ժողովդ սոյն հաշուոց քննութեան համար իւր մէջէն քննիչ Յանձնաժողով մը ընտրէ .

ՁԱՅՆԵՐ — Շա'տ լաւ, շա'տ լաւ .

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ . — Դիւանիդ կը թողումք Յանձնաժողովոյ անդամոց ընտրութիւնն ընել .

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՅ . — Ելմտացոյցի քննութեան գործն մեր ամենակարեւոր գործերէն մին է, ուստի կառաջարկեմ որ այդ Յանձնաժողովոյ ընտրութիւնն գաղտնի քուէարկութեամբ կատարուի .

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Ո՛չ, անուանական ընտրութիւնն բաւական է :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Ի՞նչ պէտք կայ գաղտնի քուէարկութեան, թող Դիւանն ներկայացնէ անդամոց ցանկն եւ մենք կընդունինք :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Ապա ուրեմն պէտք է որ իւրաքանչիւր կուսակցութենէ մարդ գտնուի Յանձնաժողովին մէջ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Կուսակցութիւն չիկայ՝, ուսկի՞ց կը հանեա այդ բառն, Սուրէնեան էֆէնտի :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Պատասխանելով) Եթէ Նուրեան էֆէնտի իւր կուսակցութիւնն չունի, մենք ունիմք մեր կուսակցութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանձնաժողովոյ անդամոց ցանկն Դիւանիս կողմանէ ներկայացուելու մասին Նուրեան էֆէնտի կողմանէ եկած առաջարկութեան համամիտ է ժողովդ :

ՁԱՅՆԵՐ — Այո՛, այո՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ապա ուրեմն ահաւասիկ Դիւանիս հնգանուն ցանկն. (Կընթեոնոն) :

- | | | | |
|----|-------------|--------|------------|
| 1. | Տիրան | էֆէնտի | Նազարեան |
| 2. | Պարգեւ | » | Փափազեան |
| 3. | Քրիստոստուր | » | Ղազարոսեան |
| 4. | Յովակիմ | » | Յովակիմեան |
| 5. | Յակոբ | » | Պարոնեան |

(Յետ ընթերցման)

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Կառաջարկեմ այդ ցանկն եօթնանուն վերածել եւ աւելցնել նաեւ Վսեմ. Աղարէկեան Սարգիս եւ Նորատունկեան Քարրիէլ էֆ.ներու անուններն :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. ԵՒ ԱՅԼՔ — Ուրեմն Մամիկոնեան Միքայէլ էֆէնտին ալ թող դրուի այդ ցանկին մէջ :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. — Այո՛, աւելի լաւ է Մամիկոնեան էֆէնտի դնել իմ տեղս, վասն զի ժամանակս չի ներեր ընդունիլ այդպիսի պաշտօն մը :

ՓԱՓԱԶԵԱՆ Պ. ԷՖ. — Կը ցաւիմ որ ես եւս՝ իբրեւ նորեկ Երեսօխոյսան՝ չի պիտի կրնամ ընդունիլ այդպիսի պաշտօն մը :

ՆԱԶԱՐԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ալ նոյնպէս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրեմ որ հրաժարման խնդիր չի հանէք. Դիւանն կը ճանչէ Ձեր ձեռնհասութիւնն ներկայ հաշուական խնդրոյն մէջ :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. — Ես բացարձակապէս կը հրաժարիմ, Ատենապետ էֆէնտի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որում վըսեմ. Նորատունկեան էֆէնտի իւր զբաղումներն յաւաջ կը բերէ, ուստի չեմք կարող պնդել. Սակայն Փափազեան Պարգեւ եւ Նազարեան Տիրան էֆ.ներու հրաժարականքն չեմք կրնար ընդունիլ, վասն զի օրինական չեն :

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, չենք կրնար ընդունիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն Յանձնաժողովն կազմուած է սա պէս,

- | | | | |
|----|-------------|--------|------------|
| 1. | Սարգիս | էֆէնտի | Աղարէկեան |
| 2. | Միքայէլ | » | Մամիկոնեան |
| 3. | Տիրան | » | Նազարեան |
| 4. | Պարգեւ | » | Փափազեան |
| 5. | Քրիստոստուր | » | Ղազարոսեան |
| 6. | Յովակիմ | » | Յովակիմեան |
| 7. | Յակոբ | » | Պարոնեան |

Սոյն Յանձնաժողովոյ պաշտօնն է քըն- նել ներկայացեալ Երևոացոյցն եւ իւր քըն- նութեան արդիւնքն ըստ կարի փութով ներ- կայացնել Ազգային ժողովոյս :

Ժողովն ԿԸՆԴՈՒՆԻ եւ ԿԸ ՎԱԽԵՐԷ սոյն Յանձնաժողովոյ ընտրութիւնն :

7

Խնդիր Երեսփոխանաց մեծամասնութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ատենական գործո- ղութիւնք վերջացած լինելով, Տեարք, կանց- նիմք այժմ Օրակարգի Ա. խնդրոյն, որ է՝ «Երկամեայ Համարատուութիւն նախորդ Կը- րօնական ժողովոյ», որոյ վրայ առաջին խօս- քը Գուրգէն էֆէնտի առած է :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՅ. — Ես իմ խօսքս վը- սեմ. Ստեփան Փաշայի կուտամ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Լա՛ւ. ուրեմն կը հրաւիրեմ Նորին Վսեմութիւնն խօսք առ- նուլ :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Ք. ԷՅ. — Խնդրոյն անցնելէ յառաջ, կը փափաքէի գիտնալ, Ա- տենապետ էֆէնտի թէ՛ արդեօք ներկայ Ե- րեսփոխանաց թիւն բաւակա՞ն է օրինաւոր նիստ կազմելու եւ որոշում տալու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Վսեմ. Նորատունկ- եան էֆէնտի յարուցած խնդիրն յայնժամ նկատողութեան կառնուի երբ կարգն որոշ- ման գայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Թէ՛ կրնամք խօսիլ եւ թէ որոշում տալ, զի ասն զի մեր ներքին Կանոնագիրն գործադրութենէ բո- լորովին դադրած չեմք նկատեր :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — Ներքին Կանոնա- գիրն դադարեալ է, Քրիստոստուր էֆէնտի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ժողովն որոշած է ներքին Կանոնագրի միայն այն մասերն դա- դարեալ նկատել որք կը հակառակին Սահ- մանադրութեան, բայց ո՛չ բոլորովին դադար- րել :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — Բայց Սահմանա- գրութեան հակառակող յօդուածներէն մին ալ այդ ներկայութեան խնդիրն է, որոյ վը- րայ ժողովոյ ուշադրութիւնն հրաւիրեց Վը- սեմ. պաշտօնակիցս, Նորատունկեան էֆէնտի :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Խօսք պիտի առնում նոյն իսկ այս խնդրոյս վրայ. — Գիտէք արդէն թէ ներքին Կանոնագրի վե- րաքննութեանն համար Յանձնաժողով մը կարգուած է որ արդէն գործի ձեռնարկած լինելով, երբ իր աշխատութեան արդիւրքը ներկայէ ժողովոյդ, յայնժամ վերջնական ո- րոշում մը պիտի տրուի այս մասին. Իսկ այսօր թէեւ կարելի չէ որոշում տալ որ եւ է Օրակարգի խնդրոյ վրայ, ըստ որում նոյն իսկ համարատու մարմինն ներկայ չէ, սա- կայն երեսփոխանք կրնան իրենց կարծիք- ներն փոխանակել այդ խնդրոց վրայ :

Իսկ դալով բուն ներքին Կանոնագրի խնդրոյն, պէտք է գիտնալ թէ բոլորովին գործադրութենէ դադրած չէ այն եւ մինչ ց՛հաստատութիւն նորոգ կանոնագրի, կըր- նամք մեզ ուղեցոյց առնուլ անոր կանոնա- կան տրամադրութիւններն, մանաւանդ սա պարագայն եւս պէտք է ուշադրութեան առնուլ թէ Բ. Դռնէն ասկից յառաջ եկած Թեգրեքեն ո՛չ թէ այդ կանոնագիրը դադրե- ցնելու նպատակ ունի, ինչպէս կարծել կու- զեն ոմանք, այլ պարզապէս տեղեկութիւն- ներ կուզէ անոր ինչ ինչ տրամադրութեանց վրայ որք Սահմանադրութեան չեն համա- պատասխաներ եւ միանգամայն Պատրիար-

քական ընտրութեանն առթիւ մի միայն Սահմանադրութեան անվթար գործադրութիւնը պարտաւորիչ կ'ընէր.....

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Ո՛չ, սխալ կը մեկնէք :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — Ահաւասիկ այդ քեզերէն (Կ'ընթեռնու). «Տէրտէսթ օւլան Պաթրիք ինթիխապը գըմնընտա ագտը զլազըմ կէլէն Մէճլիսը ումուսինին թէչքիլի Վէ ազաի մէվճուտէսինին սուրէթը ինթիխապլէրի նիզամընա մուվաֆըզ օլմասը մուգթագի պուլունտըղը կիպի, պունըն մուլամէլաթը տախիլիյէսինէ տաիր օլուպ, Վտէվլէթճէ հէնուզ մալիւմ օլմայան թալիւմաթընըն պազը մէվատտը տալի մուզայիրը աուսուլ օլտուզը իսթիխապար գըլընտըղընատան, էմրի ինթիխապ թէմամը իլէ մուվաֆըզը ուսուլ վէ նիզամ պիր սուրէթտէ ճէրեան իթտիրիլմէք իւզրէ պուրալարընա «տաիր մալիւմաթ իսթիխապը լազըմ կէլմիչ «օլմազլա խուսուսաթը մէչրուհա հագգընտա ժիզահաթը քեաֆիյէ իթասը խուսուսընա հիմմէթ օլունմասը սիեագընտա թէչքէրէի Վտէնավէրի թէրքիմ գըլընտը էֆէնտիմ :» Այժմ հասկցաք թէ Բ. Դուռն պարզապէս այդ ներքին կանոնագրի նկատմամբ տեղեկութիւն կուզէ, եւ ինչպէս կ'ըսէի, Պատրիարքական ընտրութեան մասին ըստ Սահմանադրութեան շարժիլ կը յանձնարարէ.....

ՁԱՅՆԵՐ. — Շատ ճիշդ է :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ուրեմն փափաքելի է որ Երեսփոխանք ոմանք պարբերաբար ներքին կանոնագրի խնդիր չի յարուցանեն եւ թողուն ժողովոյս շարունակել իւր աշխատութիւններն մինչեւ որ վերաքըննիչ Յանձնաժողովն այդ կանոնագրի մասին իւր աշխատութիւնն բերէ հոս :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. — Կ'ուզեմ

պատասխանել Վսեմ. Ստեփան փաշայի սոյն դիտողութեանց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրեմ որ այլ եւս չի ծանրանաք այս խնդրոյս վրայ եւ անցնիմք մեր օրակարգին :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. — Իմ ըսելիքս շատ կարճ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լաւ, խօսեցէք :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. — Ի հարկ է ամենքնիս ալ կը փափաքիմք որ Երեսփոխանք լուսաւորուին կարծեաց փոխանակութեամբ եւ միանգամայն պարտոյ ժամանակ ալ չ'անցնի Սակայն Սահմանադրութեան 86րդ. յօդուածն կը տրամադրէ թէ՛ առանց 71ի ներկայութեան ատեանն չի կրնար բացուիլ. եւ երբ հակառակ կը շարժիմք այս տրամադրութեան, միթէ՞ օրինաց հակառակ ընթացից մէջ գտնուած չեմք լինիր եւ մեր բոլոր վիճարանութիւններ ապարդիւն եւ որոշումներն անվաւեր չե՞ն նկատուիր.....

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — Ուրեմն անցեալ նստին մէջ նախորդ Բաղաքական Ժողովոյ համարատուութեան առթիւ տրուած որոշումն ալ անվաւեր պէտք է նկատել, ըստ որում նոյն օրն ալ Սահմանադրութեան տրամադրած թիւն չունէինք :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Հարկ է գիտնալ թէ լսելով որ վերջընթեր նստին մէջ ի ներկայութեան 30-35 Երեսփոխանաց քննադատութիւնք տեղի ունեցած են եղել նախորդ Բաղաքական Ժողովոյ դէմ, յաջորդ նստին ինձ պարտաւորութիւն համարեցայ, իբր Ատենապետ այդ Բաղաքական Ժողովոյն, գալ եւ պատասխանել եղած քննադատութեանց, առանց օրինական թիւ փնտուելու, որպէս զի չ'ենթատրուի թէ պատասխանատուութենէ խոյս տալ կ'ուզեմ.....

ՁԱՅՆԵՐ. — (Ընդմիջմամբ) Ատի պատճառ մը չէ՛, Նուրեան էֆէնտի:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Շարունակելով) Սակայն եւ այնպէս, ինչպէս դիտել տուաւ Վսեմ. Նորատունկեան Փարբիէլ էֆէնտի, իրաւ է թէ՛ Սահմանադրութիւնն նիստերու օրինաւորութեան համար 71 Երեսփոխանաց ներկայութիւնն պարտաւորիչ ըրած է, սակայն հոգելոյս Ներսէս Պատրիարքի պաշտօնավարութեան ժամանակ՝ նկատուելով որ նիւթապէս անկարելի է այդ բարձր թիւն գտնել, Պետական հրամանաւ որոշուեցաւ օրինական թիւ համարիլ ընտրել եւ պաշտօնի վրայ գտնուող Երեսփոխանաց կէսէն մէկ աւելին: Սակայն քանի որ այսօր ժողովն չունի ո՛չ Սահմանադրապէս որոշեալ 71 թիւն եւ ոչ ալ Պետական հրամանաւ թոյլադրել կէսէն մէկ աւելի թիւը, չենք կարող նիստ ընել . . . :

ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Եւ հակառակ պարագայի մէջ, հետեւանքն վտանգաւոր կըլլար:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Տարակոյս չիկայ:

ՁԱՅՆԵՐ. — (Առ. Նուրեան Էֆէնտի) Ինչո՞ւ անցեալ նստին այդ տեսակ խնդիր չի յարուցիք:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Ըսի արդէն թէ անցեալ նստին իմ անձս էր խնդրոյ առարկայ:

ԲԱԶՈՒՄ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ. — Օրակա՛րգ, օրակա՛րգ:

ՈՒՐԻՇ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ — Ո՛չ, օրակարգին չեմք կրնար անցնիլ:

(Աղմուկ եւ շփոթութիւն վերստին կը

տիրեն ժողովարահին մէջ. — Ատենապետ էֆէնտի ի ձայն զանգակի ի գուր կը ջանայ վերահաստատել բարեկարգութիւնն:)

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Ինչպէս Արիիարեան էֆէնտի եւ այլ Երեսփոխանք դիտել տուին, ես եւս կը յայտարարեմ թէ՛ նախորդ երկու նիստերն ալ գումարուած էին Նուրեան եւ Նորատունկեան էֆէնտիներու ցոյց տուած թիւերէն սակաւ Երեսփոխաններով եւ սակայն որ եւ է դիտողութիւն տեղի չունեցաւ, մանաւանդ թէ Նուրեան էֆէնտիի Վարչութեան տրուած գոհունակութեան քուէն օրինաւոր հոշակուեցաւ եւ ընդունուեցաւ լուսելէ յետոյ Նորին Վսեմութեան ընդարձակ պատասխաններն եղած քննադատութեանց առթիւ: Իսկ այսօր որ ունիմք մեր առջեւ նոյն Վարչութեան կրօնական ժողովոյ Համարատուութիւնն, որուն վրայ առանց որոշման մը յանգելու մի միայն մեր դիտողութիւններն պիտի յայտնեմք, եւ Վսեմ. Ստեփան փաշա որ խօսք առնելու համար բեմն ելած է, արգելքներ կը յարուցուի, իրրեւ թէ այդ արգելքներ յարուցանողք ճիշդ այս ժամուս յիշած լինէին Սահմանադրութեան այդ տրամադրութիւնըն:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Վերջին նստին օրինական թիւ ունէր ժողովն, իսկ այսօր ո՛չ:

ՁԱՅՆԵՐ. — Անցեալ նստին ալ չիկա՛ր այդ թիւն:

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Օրակա՛րգ, Օրակարգին անցէք, Ատենապետ էֆէնտի:

ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԷՖ. — Այո՛, Օրակարգ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Խնդրեմք Ս. Պատրիարք Հօրմէն որ Երեսփոխանաց հրաւէր մը,

աւելի ազդու կոչում մ'ընէ որպէս զի կարենամք օրինական թիւ ունենալ եւ գործ մը տեսնել : Վասն զի վերստին կը յայտարարեմ թէ՛ առանց օրինական թուոյ չէ կարելի խնդրոյն մէջ մտնել :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — (Բեմին վրայէն) կը զարմանամ թէ ամենքնիդ ալ կը խօսիք, եւ ես խօսք կառնում ու բեմ կելնեմ, կարգիլէք զիս խօսելէ :

ԶԱՅՆԵՐ. — Խօսե՛ցէք, խօսե՛ցէք :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Մանաւանդ թէ մենք այսօր որոշում չի պիտի տամք, այլ, ինչպէս պահ մ'առաջ ալ ըսի, խնդրոյն վերայ միմիայն կարծեաց փոխանակութիւն մը պիտի ընեմք, եւ այս մասին մեծամասնութիւն փնտռելու ալ հարկ չ'կայ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Վիճարանութիւն կամ որոշում, մի եւ նոյն բաներն են :

(Վերստին յուզում)

ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. — կը փափաքիմք Վարչութեան կարծիքն եւս իմանալ այս մասին :

ՄԱՔՍՈՒՑ Ս. ՊԵՅ — (Ատենապետ Քաղաքական Ժողովոյ) Գիտէ Պատկ. Ժողովդ թէ օրինաց գործադրութեան պատասխանատուութիւնն մեր վրայ կը ծանրանայ հանդէպ Տէրութեան : Ուստի ի դիմաց Վարչութեան կուգամ ի զգուշութիւն հրաւիրել Երեսփոխանութիւնդ եւ միանգամայն յայտարարել թէ՛ եթէ երբէք Պատկ. Ժողովդ սքխալ քայլ մ'առնու, այդ պարագային մէջ Ձեր Վարչութիւնն չպիտի կրնայ հետեւանաց պատասխանատուութիւնն ստանձնել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Ժողովս իւր գործոց պատասխանատուն ինքն է եւ ոչ թէ Վարչութիւնն :

(Շփոթ ճայներ)

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — (Միշտ բեմին վրայէն) Խնդրեմ, Ատենապետ էֆէնտի, Ձեր պաշտօնն քիչ մ'աւելի խստութեամբ ի գործ դրէք : Վասն զի կը տեսնէք թէ կէս ժամէ ի վեր կապուեմ հոս խօսք առնլու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ի ճայն գանգակի ի լուռքիւն հրաւիրելով զԵրեսփոխանս.) Ինչպէս լսեցիք, Վսեմ. Ստեփան փաշա կէս ժամէ ի վեր խօսք առնլով բեմն ելած է, սակայն այն աստիճան վիրար չհասկնալու վիճակի մէջ կը գտնումիք, որով ո՛չ Ատենախօսն կարող կը լինի իւր խօսքն սկսիլ եւ շարունակել եւ ոչ ալ Դիւանս զժողովդ կառավարել : Եւ եթէ այսպէս շարունակէք, կ'ազդարարեմ թէ ատենն փակելու պիտի պարտաւորիմ : — Խօսեցէ՛ք Ստեփան փաշա :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Եթէ կը ներէք, նախ բացատրեմ թէ որպիսի պարագայից առջեւ Ազգային Ժողովն ներքին կանոնադրի մը հարկն ու պէտքը զգացած է ժամանակին :

Իրաւ է թէ՛ ինչպէս դիտել կուտան մեր Պատ. պաշտօնակիցներէ ոմանք, նստի մը օրինաւորութեան համար 71 Երեսփոխանաց իրական ներկայութիւնն անհրաժեշտ դատուած է ըստ Սահմանադրութեան, այլ ըստ որում՝ թէեւ հարիւր քառասուն անդամներէ կազմեալ, բայց յաճախ անդամոց մի ստուար մասն ո՛չ ընտրեալ կամ ընտրեալ եւ հրաժարեալ Ժողովոյ մը մէջ ամեն ժամանակ եօթանասուն մէկի ներկայութիւն գտնելն չըսեմ անկարելի, գէթ հազուագիւտ է, ուստի նախ քան զհաստատութիւն ներքին կանոնադրի, ի ներկայութեան որ եւ

Թուոյ անդամոց նիստն բացուած կը յայտարարուեր եւ վիճարանութիւնք կանոնաւորապէս կը շարունակուէին մինչեւ որոշման վայրկեանն եւ յայնժամ ներկայութեան տուամարէն կստուգէինք թէ Սահմանադրութեան տրամադրած թիւն ունի՞նք թէ ոչ, եւ երբ չկարենայինք գտնել սահմանեալ թիւն, որոշումը ինքնին կը յետաձգուեր ուրիշ օրուան. չմոռնամ յաւելլուլ նաեւ թէ՛ ի ըսկըզբան կարեւոր ընտրութեանց համար, ինչպէս Կաթողիկոսի, Պատրիարքի, Վարչական Ժողովոց եւ այլն, բացակայից քուէներն ալ նամակաւ կը խնդրուեր զորս միացնելով ներկայից քուէներուն՝ քուէհամարն տեղի կունենար ուրիշ օր մը, առանձին յանձնախմբի մը ձեռօք ընդ Նախագահութեամբ Պատրիարքին :

Սակայն հոգելոյս Ներսէս Պատրիարքի օրով երբ տեսնուեցաւ թէ 71 ներկայութեան պայմանն վերջապէս ժողովս անգործութեան կը դատապարտէ, ըստ որում նամակաւ քուէ ուզելու դրութիւնն ալ երբեմն դժուարութեանց բաղխելով չեր յաջողեր, Ն. Սրբազնութեան առաջարկութեամբ բարեյիշատակ Ռուսիներան ներկայ Կանոնագիրս խմբագրեց որոյ ընդունելութեամբ եւ գործադրութեամբն ոչ թէ 71՝ այլ ընտրեալ եւ պաշտօնի վրայ գտնուող Երեսփոխանաց օրինական մեծամասնութիւնն, նաեւ ի հարկին անոր որոշող ձայնից արտայայտութիւնն բաւական համարուեցաւ խնդրոց որոշում տալու : Կուսահոգի Ներսէս Սրբազանի նման Պատրիարքի մը օրով, յորում չեմ կարծեր թէ Ազգային գործերն այսօրունէ նուազ բարեկարգ վիճակ մ'ունեցած լինին, ժողովս 7-8 տարիներ շարունակ այս Կանոնագրով վարեցաւ փոքր ինչ դժուարութեամբ, բայց առանց մեծամեծ անտեղութեանց տեղի տալու : Միայն Պատրիարքական վերջին ընտրութեան առթիւ Ներքին գործոց Նախարարութենէն ք.գր.ի.ե մը կուգայ, որով, ինչպէս պահ մ'առաջ ալ ցոյց տուի, այդ ներքին կանոնադրութեան մասին տեղեկութիւն կու-

գէ պարզապէս : Արդ Վարչութիւնն տըռուած լինելով այս մասին հարկ եղած բացատրութիւններն եւ ժողովս ալ իւր մէջէն Յանձնաժողով մը կարգած լինելով, որ կը յուսամ թէ քիչ օրէն ներկայէ Ձեզ իւր աշխատութիւնն, հարկ չիկայ այժմէն խնդիր յարուցանել եւ մտքերն յուզելու :

ԶԱՅՆԵՐ — Շա՛տ լաւ, շա՛տ լաւ :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — (Շարունակելով) Կառաջարկեմ ուրեմն բաւ համարել եղած այսքան խօսքերն եւ անցնիլ Օրակարգի վիճարանութեան որոյ մասին տարակոյս չիկայ թէ չենք կարող որոշման մը յանգիլ մինչեւ որ չունենամք Օրինական մեծամասնութիւն :

ԶԱՅՆԵՐ — Օրակա՛րգ, Օրակա՛րգ :

ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՑ. — Ի մօտոյ գիտակ եմ այն պատճառներուն որով վսեմ. Ստեփան փաշա եւ այլ մի քանի Երեսփոխանք կը յուզեն այս խնդիրն : Սակայն ես նոյն իսկ ի սէր Ազգային Ժողովոյ, կը խնդրեմ որ նախ օրինական թուոյ խնդիրն որոշուի եւ այս մասին Վարչութենէն եւս ապահովութիւն առնուելէ յետոյ ժողովդ անցնի իւր Օրակարգին, վասըն զի ինձ կը թուի թէ այս կէտի վրայ վերջնական որոշում չի տրուած, իւր տալիք միւս որոշումները վտանգի կենթարկեն զինքը :

(Բողոքոյ ձայներ)

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Կը բողոքեմ վսեմ. Նորատունկեան էֆէնտիի ըրած ակնարկութեան դէմ. ես բնաւ նպատակ չ'ունիմ ո՛ր եւ է որոշման կամ այլ ինչի թելադրութիւն ընել ժողովիս, մինչեւ հիմա քանիցս յայտարարեցի թէ՛ «Այս թուով որոշում չ'ենք կրնար ընել» բաւական է որ

պարապ տեղն եկած չըլլանք այս տեղ, խընդիրները պարզենք լուսարանենք, վերջապէս ընենք ի՛նչ որ կ'ընէինք մինչեւ ց'այժմ. ինչ որ նորատունկեան եւ նուրեան էֆէնտիք հարիւրներով անգամ ըրած են իրենք եւ այսօր չեն հաճիր որ մենք ալ ընենք իրենց հետ. այս պարագայից մէջ եթէ գաղտնի դիտումներու ենթադրութիւն պատշաճ ըլլայ, հա՛րկ է մեզ խօսելու արգիլողներուն քով փնտուել զանոնք եւ ո՛չ մեր քով:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Մեզ այդ տեսակ սպառնալիքներ մի՛ ընէք, նորատունկեան էֆէնտի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքն Քաղաքական Ժողովոյ Վսեմ. Ատենապետինն է:

ՄԱՔՍՈՒՑ Ս. ՊԵՑ — (Ատենապետ Քաղ. Ժողովոյ) Ձեր Վարչութիւնն մինչեւ ցարդ ինքզինքը պատասխանատու կը նկատեր հանդէպ կառավարութեան՝ Ժողովոյդ կողմանէ տեղի ունեցած որ եւ է գործառնութեանց մասին, սակայն, ինչպէս պահ մ'առաջ ալ յայտարարեցի, եթէ այսուհետեւ որ եւ է սխալ քայլ մ'առնու Ազգային Ժողովդ, հետեւանաց պատասխանատուութիւնն Վարչութիւնն չպիտի կրնայ ստանձնել:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — (Առ. Մարտիկոս Ս. Պէյ) Սպառնալիք կրնէք մեզի դէմ. բայց չեմ կարծեր թէ այդ սպառնալիքներէն վախցող գտնուի մեր մէջ. ո՛ւր տեսնուեր է պատասխանատուութեան ենթարկել Երեսփոխան մը՝ երբ հրապարակաւ կը խօսի, եւ խօսածը կը գրուի եւ բնաւ որոշում տալու առաջարկութիւն եւ մտադրութիւն չ'ըլլար որ եւ է կողմէ:

ՁԱՅՆԵՐ — Ձե՛նք ընդունիր, կը մերժենք Վարչութեան այդ յայտարարութիւնը:

(Եփոք ճայներ յամենուստ)

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Երբ Քաղաքական Ժողովն երեք անդամներով նիստ կ'ընէ, որոշումներ կուտայ, օրինաց հակառակ չի նկատուիր, այնպէս չէ՞. Բայց մեք որոշում չպիտի տանք, այլ պիտի վիճարանինք, այս ալ մեզ յանցանք կը վերագրուի. ի՞նչ արդարութիւն: Միթէ օրէնք միայն մե՞զ համար կան. դուք արտաքո՞յ էք անոր ազդեցութենէն:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Պատասխանելով) Որոշում եւ վիճարանութիւնք չենք կրնար զանազանիլ. խնդիրն նստի օրինաւորութեան վրայ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քաղաքական Ժողովոյ Ատենապետ Պէյը կ'ըսէ թէ՛ Ազգային Ժողովոյս կողմանէ եթէ յետ այսու սխալ քայլ մ'առնուի, ինք չի կրնար այս մասին պատասխանատուութիւն ստանձնել:

Արդ, յանուն Ժողովոյս կը հարցնեմ Վարչութեան Ատենապետ Պէյին թէ՛ իւր ներկայ յայտարարութեամբ Ժողովոյս ո՞ր սխալանքներն կ'ակնարկէ:

ՄԱՔՍՈՒՑ Ս. ՊԵՑ. — Իմ յայտարարութիւնս այն էր թէ՛ եթէ Ժողովն յետ այսու սխալ քայլ մ'առնու, հետեւանաց պատասխանատուութիւնն Վարչութիւնն չ'կըրնար ստանձնել. Հարկ է որ Ժողովդ նախ իւր կազմակերպութեան օրինաւորութեան մասին վերջնական որոշում տայ եւ ապա խնդրոյն մէջ մտնէ: Գալով Քաղաքական Ժողովոյ երեք չորս անդամներով նիստ կազմելու եւ որոշումներ տալու մասին Վսեմ. Ստեփան Փաշայի ակնարկութեանց, ասի տարբեր խնդիր մ'է որ կրնայ Ժողովոյս քրննադատութիւնն հրաւիրել իւր վրայ, բայց չունի առնչութիւն այս խնդրոյս հետ:

ՁԱՅՆԵՐ — Ի՞նչպէս առնչութիւն չունի միթէ յուզուած խնդիրն ներկայութեան օրինաւորութեան խնդիր չէ՞:

ԱՅՆԱՊԵՏ ԷՅ. — Չեմ հասկնար ինչ կարգի պատասխանատուութիւն է վարչութեան ակնարկածը, սակայն ինչ որ ալ ըլլայ, տեղի չկայ շարունակ այդպիսի յայտարարութեանց, զի ոչ ժողովս եւ ոչ Դիւանս շեղած են մինչեւ ցայժմ օրինաւորութեան գծէն եւ ոչ ալ այսուհետեւ տեղի կայ կըրկներու հակառակն:

(Մէկ կողմէ Երեսփոխանք Օրակարգ կազաղակեն եւ միւս կողմէ հակառակն.— մեծ յուզում ժողովասրահին մէջ— Ատենապետ էֆէնտի ի ձայն զանգակի ի զուր կը ջանայ բարեկարգութիւնն վերահաստատել:)

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ — Կը կրկնեմ թէ՛ պէտք է անցնիլ Օրակարգի եւ սկսիլ վիճարանութեան եւ երբ կարգն որոշման գայ, յայնժամ օրինական թիւն կը փնտռեմք...

ՄԻ ՔԱՆԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ. — Ո՛չ, ոչ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ուրեմն Ազգային ժողովն անգործութեան դատապարտելու համար մասնաւոր դիտում կայ...

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — Այդ տեսակ բան չիկայ, ենթադրութիւններ մի՛ ընէք:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ի՞նչպէս կուզէք ուրեմն որ դիտում չենթադրեմ, երբ ժողովոյ Նախագահն կը հրաւիրէ զմեզ ու ինքն չի գար, եւ ոչ իսկ երկտողիւ մը կիմացնէ մեզ բացակայ մնալն, երբ Օրակարգի մէջ նախորդ կրօնական ժողովոյ Համարատուութիւնն ունինք իբր առաջին խնդիր եւ համարատու մարմինն ներկայ չգտնուիր

երբ նոյն իսկ անոնք կուգան որք ժողովոյս գործառնութեանց դէմ օրինական դիտողութեանց պատրուակին ներքեւ արգելքներ կը յարուցանեն եւ այսպէս ժողովոյս ժամերն ապարդիւն անցնելու պատճառ կ'ըլլան...

ՁԱՅՆԵՐ. — Շա՛տ իրաւացի է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԵՒ ԳՈՒՐԳԷՆ ԷՅ.Բ. — Օրակա՛րգ, օրակա՛րգ:

ԱՅՆԱՊԵՏ ԷՅ. — Նոյն իսկ այս անկարգութիւնք եւ յուզումներն կը հաստատեն Ներքին Կանոնագրի պէտքն, առանց որոյ չէ կարելի Դիւանին վարել զժողովն: Եւ որովհետեւ վարչութեան Ատենապետ Պէյն ժողովոյս օրինաւորութիւնն խնդրոյ ներքեւ դնել կ'ուզէ, եւ մեզ անծանօթ վտանգներ կ'սպառնայ...

ՄԱՔՍՈՒՑ Ս. ՊԷՑ — (Ընդմիջմամբ) Ատենապետ էֆէնտի, ի՞նչ ըսել է կ'սպառնայ:

ԱՅՆԱՊԵՏ ԷՅ. — Կը գուշակէ ուրեմն:

ՄԱՔՍՈՒՑ Ս. ՊԷՑ. — Ո՛չ, ո՛չ, մենք այդպիսի բան չըսինք:

ԱՅՆԱՊԵՏ ԷՅ. — Ապա ուրեմն կը յայտարարէ:

ԲԱԶՄԱԹԻԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ — Պատգամ չե՛մք կրնար ընդունիլ վարչութեանն:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՅ. — Խնդրեմ. Ատենապետ էֆէնտի, հոս անձնականութիւններ մտիկ ընելու եկած եմք թէ ոչ՝ ազգային խնդիրներով զբաղելու:

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՅ. — Չեր այդ խօս...

քըն, Պառնասեան էֆէնտի, Ժողովոյս Ժամերըն ապարդիւն անցնել տուողներուն ըսէք:

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — Կը տեսնէք Տեարք թէ Օրակարգի անցնելու կամ չանցնելու մասին կարծիքներն բաժնուած են. ոմանք կառարկեն թէ Ժողովս Օրակարգի անցնելու համար չունի իւր օրինական թիւն. :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — (Ընդմիջմամբ) Ո՛չ թէ Օրակարգի անցնելու այլ նոյն իսկ Ժողով բանալու համար:

ԶԱՅՆԵՐ — Թողէ՛ք շարունակէ, Նուրեան էֆէնտի:

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — (Շարունակելով) Եւ այլք դիտել կուտան թէ միմիայն որոշման պահուն պէտք է փնտռել այդ թիւն. :

ԶԱՆԱԶԱՆ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ—Ա.յո՛, այդ պէս է:

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — (Շարունակելով) Ուրեմն իմ պարտքս է ուղղակի Ժողովոյդ կամաց դիմել :

ԶԱՅՆԵՐ — Օրէնքը քուէի չէ՛ք կրնար դնել, Ատենապետ էֆէնտի:

ԲԱԶԾԱԹԻԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ. — Օրակարգ, Օրակարգ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՅ. — Ո՛չ, չէք կրնար անցընիլ Օրակարգի:

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՅ. — Լաւագոյն է, Ատենապետ էֆէնտի որ մի անգամ ընդ միշտ խօսինք ու վերջացնենք այս ներկայութեան խնդիրն:

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՅ. — Ո՛չ, Օրակարգ:

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — Կը տեսնեմ թէ մըտքերն չափազանց յուզուած են եւ հանդարտութեան պէտք ունին Երեսփոխանք: Ուստի քառորդ վայրկեան դադարի համար կը փակեմ ատեանն:

Չայս ասելով Ատենապետ էֆէնտի մէկ քառորդ դադարի համար կը փակէ զատեանը:

(Դադարեց յետոյ)

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — Ատեանն վերստին բացուած լինելով, Տեարք, առաջին խօսքն Դիւանս կուտայ Պէրպէրեան Ռէթէոս էֆէնտիի:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՅ. — (Բեմն ելնելով) Տեարք Երեսփոխանք, լսեցինք Վսեմ. Ստեփան փաշայի բացատրութիւններն. Նորին Վսեմութիւն կարգաց մեզ վերստին Նախարարական թէզքէրէյն յորմէ տեսնուեցաւ թէ այնու Բ. Դուռը կը յանձնարարէ մեզ կատարել Պատրիարքական եւ Երեսփոխանական ընտրութիւններն համաձայն Սահմանադրութեան, եւ յաւելլով թէ կ'իմանայ որ Ներքին Կանոնադրութիւն մ'ունինք որ անձանօթ մնացած է իրեն եւ թէ նորա մէջ Սահմանադրութեան հակառակ ինչ ինչ տըրամադրութիւնք կը գտնուին, կը խնդրէ մենէ տեղեկութիւն այդ Կանոնադրի մասին. Քաղաքական Ժողովն փութաց պատասխանել Նախարարական թէզքէրէյին թէ Երեսփոխանաց ընտրութիւնք կը կատարուին ըստ Սահմանադրութեան եւ թէ Պատրիարքական ընտրութեան մէջ առաջնորդ պիտի բռնուի լոկ Սահմանադրութիւնը: Ազգային Ժողովս աւորոշեց Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ Ներքին Կանոնադրոյ տրամադրութիւնքն ի նկատ չառնուլ, միանգամայն եւ իրաւ է դադարեալ հրատարակեց նորա այն յօդուածներն որք կը հակառակին Սահմանա-

դրութեան: Ըստ այսմ ներքին կանոնադիրը իւր ամբողջութեամբը գործադրութենէ չէ դադրեցուցած ժողովս, այլ միայն Սահմանադրութեան հակառակող կէտերը: Բայց որո՞նք են այս կէտերը, ահա՛ այս է դժուարին խնդիրը: Դեռ ծանօթ չեն նոքա մեզ, քանզի քննութեամբ մը կրնան որոշուիլ անոնք, եւ այդ քննութիւն չէ կատարուած: Օրէնքներու գնահատութեան մէջ կայ նաեւ օրինաց ոգւոյն ու տառին խնդիրը: Կայ բան որ կը հակառակի ըստ տառին, բայց ըստ ոգւոյն համաձայն է, եւ գիտեմք որ ոգին շատ աւելի կարեւոր է քան տառն: Արդ այս քննութիւնքը կատարուելու եւ ժողովոյս տեղեկագրելու պաշտօնով Յանձնախումբ մը կարգուեցաւ անցեալ նստին, որ քիչ օրէն կը բերէ իւր աշխատութեանց արդիւնքն: Մինչեւ այն նստին՝ անտեղի կը գտնեմ այս տեսակ խընդիրներ յարուցանելը, վասն զի ժողովս դեռ միաձայնութեամբ չէ ճշդած այն կէտերը որք պէտք է հակառակ նկատուին Սահմանադրութեան:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Սահմանադրութեան այդ կէտերն ուսումնասիրելու պէտք չունիմք:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Պատասխանելով) Ապա ուրեմն ո՛չ դուք, նուրեան էֆէնտի, եւ ոչ ալ արդի վարչութեան Քաղաքական ժողովոյ վսեմ: Ատենապետն ժողովոյս մէջ այդ տեսակ թուոյ խնդիր մը յարուցանելու իրաւունք ունիք, քանի որ, եթէ տառապէս պիտի հետեւինք Սահմանադրութեան, արդի եւ նախորդ Քաղաքական ժողովոց կազմութիւնն ալ Սահմանադրութեան օրինաց հակառակ էր եւ է, ըստ որում փոխանակ 20ի, 14 անդամներէ կը հազմուի Քաղաքական ժողովը, թողունք որ, որպէս ըսի, նիստ կընէ 2-3 անդամոց ներկայութեամբ միայն.....

ՁԱՅՆԵՐ — Այո՛, այդ ալ Սահմանադրութեան հակառակ է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Մի՛ մոռնաք նաեւ յիշեցնել թէ արդի Քաղաքական ժողովոյ ընտրութիւնն ալ 27 Երեսփոխանաց մասնակցութեամբ միայն տեղի ունեցաւ.....

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Եւ 10-12 քուէներով Քաղաքական ժողովոյ անդամ ընտրուեցան:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Պատասխանելով) Բայց կառավարութիւնը վաւերացուց:

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — (Ի մայն զանգակի) Թողէ՛ք որ Ատենաբանը շարունակէ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Շարունակելով) Ես չեմ ուզեր մանրամասնութեանց մէջ մտնել: Միայն սաչափ կըսեմ թէ՛ եթէ այս խնդրոյն մէջ խօսելու ամենէն քիչ իրաւունք ունեցող մը կայ, այն ալ նուրեան էֆէնտին է.....

ՁԱՅՆԵՐ — Ինչո՞ւ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Վասն զի նոյն իսկ նուրեան էֆէնտին էր որ անցեալ նիստին ի ներկայութեան 46 Երեսփոխանաց իւր համարատուութեան վրայ բացատրութիւններ տուաւ՝ առանց նստին օրինաւորութեան խնդիր յուղելու, եւ այսօր եւս ինք եւ իւր համախոհք նստին առաջին մասին մէջ տրուած որոշմանց մասնակցեցան: Միթէ հակասութի՞ւնն չէ այս, մէն մի նստի տարբեր չափ ու կշիռ գործածել չէ՞.....

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Վերընդմիջմամբ) Անցեալ նիստն պէտք է նկատել իբր շարունակութիւն մը նախորդ նստին որ տեղի ու-

նեցաւ ի ներկայութեան 30-35 Երեսփոխանաց

(Ընդմիջմունք զանազան նստարաններէ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը հրաւիրեմ վըսեմ. Նուրեան էֆէնտին որ թոյլ տայ Ատենաբանին շարունակել առանց ընդմիջման :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Իրաւունքս է անմիջապէս պատասխանել անձիս նկատմամբ եղած դիտողութեանց : (Շարունակելով) Կըսէի թէ երբ վերջընթեր նիստին ի ներկայութեան այդ 30-35 Երեսփոխանաց մեր համարատուութիւնն սեղանին վրայ դրեր , վիճարաներ են , ոմն այս ինչ եւ ոմն այն ինչ մեկնութիւնն տուեր է առանց համարատումարմնոյն կողմանէ տրուելիք բացատրութիւններն շտուելու

ՁԱՅՆԵՐ — (Ընդմիջմամբ) Մե՛ր իրաւունքն գործադրեցինք :

ՆՈՒՐԵԱՆ Յ. Յ. — (Շարունակելով) Եւ երբ եղած այդ վիճարանութիւնք հրատարակուեցան ազգային լրագրաց մէջ , իմ պարտաւորութիւնս էր , յաջորդ նստին , եթէ հինգ Երեսփոխան ալ գտնէի , գալ եւ բացատրութիւն տալ , եւ բարեբաղդաբար օրինաւորապէս կազմեալ ժողով մը գտայ նոյն օրն

ՁԱՅՆԵՐ. — (Ընդմիջմամբ) Իսկ այսօ՞ր :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Իսկ այսօր նստին սկիզբն երբ եկայ , ազգային իշխանութիւնն յարձակմանց ենթակայ գտայ , հետեւաբար իմ պարտքս էր եւ պարտականութիւնս պաշտպանել այդ իշխանութիւնն , առանց նկատելու թէ յարձակումներն օրինաւոր

թէ ապօրինաւոր նստի մը մէջ տեղի կունենային

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Կը յիշեցնեմ Նուրեան էֆէնտի թէ այդ կարծեցեալ յարձակումներէն վերջ , ժողովը ըստ օրինի Ելմտացոյցի քննութեան համար Յանձնաժողով մը կարգեց եւ Նորին Վսեմութիւնն եւս մասնակցեցաւ այդ ընտրութեան եւ մինչեւ իսկ իւր կողմանէ ընտրելի առաջարկեց Նորատունկեան եւ Աղարէկեան էֆէնտիներն : Եթէ նիստն ապօրինաւոր է , ուրեմն Նուրեան էֆէնտի ինչո՞ւ մասնակցեցաւ այդ Յանձնաժողովոյ ընտրութեան , կամ եթէ օրինաւոր է՝ ինչու ապա կը հակառակի այժմ՝ , երբ կը պատրաստուինք Օրակարգին անցնիլ . ի՞նչ յեղակարծ բան տեղի ունեցաւ այս փոփոխութիւնն յառաջ բերող , օրինաւորն յանկարծ ապօրինաւորութեան շրջող : Այս ժողովը Ազգային Ժողովն է , եւ մի քանի անձինք չեն կարող խաղալիկ ընել զայն իրենց ձեռքն :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Կը պատասխանեմ Պէրպէրեան էֆէնտի թէ՛ եթէ առանց անդրադառնալու սխալ քայլ մ'առինք այդ կէտին մէջ , ատի չենթադրեր թէ պէտք է յարատեւենք նոյն սխալ շաւղին մէջ :

ՁԱՅՆԵՐ — Ո՛չ , այդ շեղաւ . այդ պատասխան չէ՛ :

(Անորոշ ձայներ յամենուստ)

ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս. ԷՖ. — Ժամը 7ին բացուեցաւ ատենը , այժմ 9ն է . ուրեմն երկու ժամ վիճարանեցանք , բայց դեռ չի կրցանք որոշում մը տալ : Կ'առարկուի թէ տասն եւ չորս տարի ներքին կանոնագրով մը կառավարուած է Ազգային Ժողովը . բայց ինչ որ ալ ըլլայ այդ անցեալը , այժմ մեր դիմաց կառավարական պաշտօնագիր մ'ու-

նինք որ մեզ ցոյց կուտայ մեր ժողովի գումարման օրինաւոր թիւն, այն է ընտրուած Երեսփոխանաց կէսէն մէկ աւելի. հետեւաբար առանց այդ թիւն ամբողջացնելու կարելի չէ մեզ օրինաւոր ատեան բանալ, վիճարանիլ ու որոշում տալ: Ես իբր Երեսփոխան չեմ կարող մասնակցիլ նստի մը որ զուրկ է այդ օրինական հանգամանքէն: Երկու ժամ է սպասեցի յուսալով որ օրինական թիւը կ'ամբողջանայ. ա՛լ այսուհետեւ հաւանականութիւն չկայ այդ ամբողջացման, ուստի կը պարտաւորիմ մեկնիլ:

Ասկից զատ ուրիշ խնդիր մ'ալ կայ. կ'առարկուի թէ Քաղաքական ժողովոյ անդամոց թիւն պէտք է ըստ Սահմանադրութեան 20 լինի. սակայն հարկ է գիտնալ թէ այդ թիւն թէեւ 14 ի իջած է, բայց կառավարութեան վաւերացումն ստանալէ վերջ:

(Զայս ասելով Աղարէկեան Սարգիս եւ Նուրեան Յովհաննէս էֆէնտիք կը մեկնին ժողովէն):

ՄԱՔՍՈՒՑ Ս. ՊԵՑ — (Ատենապետ Քաղ. ժողովոյ) Ի դիմաց վարչութեան քանիցս յայտարարեցի արդէն թէ Պատկ. ժողովդ պէտք է զգուշանայ սխալ քայլ մ'առնելէ, սակայն կը տեսնեմ թէ դարձեալ սխալ քայլ առնելու հետամուտ է առանց խոհական խորհրդոց անսալու: Ուստի սոյն ազդարարութեամբ.....

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — (Ընդմիջմամբ) Ազդարարութիւն չե՛նք կրնար ընդունիլ. վարչութիւնն իրաւունք չունի մեր գործոց միջամտելու, քանի որ գաղտնի բան չունինք.....

ԶԱՅՆԵՐ — Կսե՛նք վարչութեան Ատենապետն:

ՈՒՐԻՇ ԵՍՏԱՐԱՆԵՐԷ — (Ցոյց տալով զՏօրք. Թիրեաքեան Էֆէնտի.) Ահա՛ւասիկ մեր Ատենապետն. ուրիշի միջամտութիւն չե՛նք կրնար ընդունիլ:

(Վերստին աղմուկք)

ԱՏԵՆԱՊԵՑ ԷՅ. — (Ի ձայն գանգակի) կ'ազդարարեմ ընդմիջող Երեսփոխանաց թէ՛ իրաւունք չունին Քաղաքական ժողովոյ վսեմ. Ատենապետ Պէյի խօսքն ընդհատելու: — Հաճե՛ցէք շարունակել Սիմօն Պէյ:

ՄԱՔՍՈՒՑ Ս. ՊԵՑ. — (Շարունակելով) վարչութիւնն իւր սոյն դիտողութեամբ իւր պարտքն կատարած համարելով, այլ եւս ինքզինք պատասխանատուութենէ զերծ կը համարի:

(Սոյն յայտարարութեամբ Մաքսուտ Սիմօն Պէյ եւս կը մեկնի ժողովէն:)

ԶԱՅՆԵՐ — Օրակա՛րգ, Օրակարգ:

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՅ. — Կուզեմ հասկնալ թէ Դիւանդ իբր ի՞նչ կը նկատէ այս գումարումը, քանի որ վարչութիւնն ալ մեկնեցաւ:

ԵԱԶԱՐԵԱՆ Ց. ԷՅ. — (Պատասխանելով) Կը նկատեմք իբր Ազգային օրինաւոր ժողով:

ԳՈՒԳԷՆ Յ. ԷՅ. — (Առ. Պեկեան Յ. ԷՅ.) Ի՛նչ կը կարծէք. զմեզ գերի՞ ընել կուզէք, խաղա՞լիք ընել կուզէք վարչութեան ձեռքը:

ԶԱՅՆԵՐ — Ուզողն կրնա՛յ մեկնիլ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Այո՛, բաւական է որ Դիւանն հոս է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրաւ է թէ Գործադիր իշխանութիւնն պարտաւոր է իւր ներկայացուցիչն ունենալ ժողովոյս մէջ: Սակայն ժողովս ո եւ է խնդրոյ նկատմամբ իւր կարծիքն ու դիտողութիւնն լսելու համար պէտք չունի անոնց ներկայութեան սպասելու:

(Հաւանութեան ցոյցեր)

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — Քանի որ ամեն Երեսփոխան իւր կարգին խօսք առաւ ու խօսեցաւ, ըսել է թէ նիստերնիս օրինաւոր է.....

ՁԱՅՆԵՐ — (Ընդմիջմամբ) Ատոր տարակոյս չիկայ:

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — (Շարունակելով) Սակայն ես այս աւուր ատենարանից դերերը բոլորովին փոխուած կը տեսնեմ, եւ անշուշտ Օրակարգն ծանր խնդիր մը պարունակելու է կարծեաց այսպիսի յեղաշրջում առաջ բերելու համար: Ասկէց քանի մը ամիսներ յառաջ երբ վիճակաց վերակազմութեան ծրագիրն Վարչութեան կողմանէ մեզ ներկայացաւ, նուաստս, Գուրգէն էֆէնտի եւ այլ Երեսփոխանք ներկայութեան խընդիրն յարուցինք որով ո՛չ միայն ընտրուած Երեսփոխաններուն կէսէն մէկ աւելին բաւական կը համարէինք նիստն օրինական նրկատելու համար, այլ մինչեւ իսկ Սահմանադրութեան նշանակած 71 թիւն անհրաժեշտ կը սեպէինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջմամբ) Այդ խօսքերն խնդրէն դուրս են, Արփիարեան էֆէնտի. ուստի հաճեցէք խնդրոյն վերադառնալ:

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — (Շարունակելով) Իսկ Սիմօն Պէյ եւ իւր համախոհք

բաւական կը համարէին նուազ թիւ մը: Այժմ ներհակ կարծիքներ կը յայտնուին երկու կողմանէ. բայց ես կարող չեմ նախորդ նիստերէն տարբեր կարծիք յայտնելու.....

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Կ'երեւայ թէ հաւատքնիտ փոխած էք այսօր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թողէք, Գուրգէն էֆէնտի որ շարունակէ Ատենարանն:

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — (Շարունակելով) Եւ արդարութեան պարտք կը համարիմ յայտարարել թէ՛ Սիմօն Պէյ եւս այժմ ճիշդ նոյն պատասխանը կուտայ ինչ որ մի քանի նիստ առաջ կուտար: Առաջնորդական ընտրութեան եղանակը փոխելու խնդրոյն առթիւ հարցուցինք Քաղաքական ժողովոյ Ատենապետ Պէյին թէ՛ կը կարծէ՞ որ եթէ նոյն օրը 71 Երեսփոխաններէ նուազ թուով նիստ ընենք, ժողովին որոշումները դժուարութեանց պիտի չբաղխին: Թէպէտ եւ Սիմօն Պէյ կը փափաքէր որ նոյն աւուր նիստն օրինաւոր համարուի, բայց եղած հարցման պատասխանեց թէ՛ պատասխանատուութեան ներքեւ չմնար: Արդ, այսօր եւս Սիմօն Պէյ ճիշդ նոյն պատասխանը կուտայ. հետեւաբար վերին աստիճանի կարեւորութիւն պէտք է տալ Վարչութեան Ատենապետ Պէյի յայտարարութեանց: Պէտք է յաւելում նաեւ թէ՛ երբ ուրիշներն վտանգ կը զեկուցանեն, ժողովոյս պարտականութիւնն է լրջօրէն քըննել թէ մինչեւ ո՛ր աստիճան հիմնական է այդ սպառնալիքները. խոհեմութիւն չէ զայնրս արհամարհել ու անցնիլ.....

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Թեևք 46ի գործիչներն եմք, Արփիարեան էֆէնտի. եւ շա՛տ բաներ տեսած եմք. վըտանգ չիկա՛յ, կը հասկնա՛ս:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — (Առ. Արփիարեան

Ա. ԷՖԵՆՈՒԻ) Աստուծոյ սիրուն ըլլայ, վար
եղէք բեմէն:

(Ազմուկք յամենուստ)

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — Թոյլ տուէք որ
եզրակացութեան մը յանգիմ:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Կը հրաւիրեմ Ատե-
նարան էֆէնտին համառօտել իւր խօսքն եւ
եզրակացութեան մը յանգիլ, ըստ որում
ժամանակնիս սուղ է:

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — Շա՛տ լաւ,
Ատենապետ էֆէնտի: (Շարունակելով) Կը
տեսնէք ահա որ Վարչութիւնն բացակայ է,
բացակայ է մանաւանդ Ս. Պատրիարք Հայրն
որ ժողովին օրինաւոր պատասխանատուն է
հանդէպ Տէրութեան եւ Ազգին. եւ ի բացա-
կայութեան Նորին Սրբազնութեան, երբ
վտանգներու գուշակութիւններ կ'ըլլան այն-
պիսի անձանց կողմանէ որ բարձրագոյն շըր-
ջանակներու հետ սերտ յարաբերութիւն ու-
նին, ամեն տարրական խոհեմութիւն կը
պահանջէ որ այս մասին նախապէս Ս. Պատ-
րիարք Հօր կարծիքն առնուի եւ ըստ այնմ
որոշում տրուի:

ՁԱՅՆԵՐ. — Օրակա՛րդ, օրակա՛րդ:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրեմ Երեսիո-
խան էֆէնտիներէն որ պահ մ'ալ իրենց Ա-
տենապետն մտիկ ընեն:

Ամենքնիդ ալ խօսեցաք եւ իրաւունք-
նիդ լիապէս ի գործ դրիք եւ կարծեմ թէ
չ'լուսաբանուած կէտ չի մնաց եւ արդարու-
թեան պարտք է ինձ յայտարարել թէ վեր-
ջին նիստն ալ 45 Երեսիոխանաց ներկայու-
թեամբ բացուեցաւ եւ 64 Երեսիոխանաց
մասնակցութեամբ որոշում տրուեցաւ, ըսել
է այն նիստին մէջն ալ ժողովս չունէր օրի-

նական մեծամասնութիւն: Սակայն եւ այն-
պէս ժողովոյս նիստերու օրինաւորութեան
մասին անմիջական տնօրինութեան մը պէտ-
քըն անհրաժեշտ է...

ՁԱՅՆԵՐ. — (Ընդմիջմամբ) Ի՞նչ հարկ:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Մի՛ ըսէք այդպէս.
պէտք է որոշում տայ ժողովս եւ միանգամ
ընդ միշտ փակուի այս խնդիրն որպէս զի
մենք ալ ժամավաճառ չլինինք, ազգին գոր-
ծերն երեսի վրայ չի մնան:

ՁԱՅՆԵՐ. — Շա՛տ լաւ, շա՛տ լաւ:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն այդ ներկա-
յութեան խնդրոյ մասին կրնամք սա ձեւով
որոշում մը տալ, այսինքն թէ առաջին ան-
գամ օրինական թիւ փնտռել, որ եթէ չգո-
յանայ, յաջորդ անգամուն նիստն օրինաւոր
համարել ի ներկայութեան ո եւ է թուոյ ան-
գամոց եւ այս բարեփոխման մասին Բ. Իրան
հաւանութիւն ստանալ:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Այդ կերպով
որոշում տալն պարզապէս Սահմանադրական
նոր խնդիր յարուցանել կը նշանակէ:

ՁԱՅՆԵՐ — Մենք կ'ընդունինք այդ ա-
ռաջարկութիւն:

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ — Ո՛չ, ո՛չ, չենք ըն-
դունիր:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ օրինի ատեանն
կը բացուի ի ներկայութեան որ եւ թուի ան-
գամոց եւ վիճարանութիւնք կ'շարունակուին
բայց երբ կարգն կուգայ որոշման, յայնժամ
կը փնտռուի օրինական մեծամասնութիւն որ
եթէ չգոյանայ, կը մնայ խնդիրն յաջորդ նիս-
տին, յորում ներկայից թիւն բաւական կը
համարուի խնդիրն որոշում ստանալու հա-

մար : Ատենապետ էֆէնտի կողմանէ եկած առաջարկութիւնն այս ձեւով միայն կրնամք ընդունիլ :

ՁԱՅՆԵՐ — Այո՛ , այո՛ :

ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ Գ . ԷՑ . — Միտքս բան մը եկաւ այս խնդրոյն լուծմանն համար , զոր վարչութեան Ատենապետ Պէյին ալ հաղորդեցի , եւ նա եւս ընդունելի գտաւ . . . :

ՁԱՅՆԵՐ (Ընդմիջմամբ) Ըսէ՛ք , ըսէ՛ք :

ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ Գ . ԷՑ . — (Եարունակելով) Այն է բանաձեւ մը քուէարկել թէ . «Ազգային ժողովն մեծագոյն թուով անդամոց ներկայութեան սպասելէն յետոյ , տեսնելով որ չեն ներկայանար Սահմանադրութեան պահանջման համեմատ 71 հոգի եւ ետ իսկ Նախարարական հրամանագրով արձակուեալ 56 անձինք , կ'որոշէ իւր Օրակարգին անցնիլ , ամեն պատասխանատուութիւն իւր վրայ առնելով . . . »

(Մերժման ցոյցեր յամենուստ)

ԱՍԼԱՆԵԱՆ Ս . ՓԱՇԱ . — (Յուզմամբ) Ձե՛նք կրնար ընդունիլ այդ տեսակ բանաձեւ մը . ծուղակ մ'է այդ , զի ժողովն կ'առաջնորդէ որոշումներ ընելու , ուրկէ մենք կ'զգուշանանք :

ՁԱՅՆԵՐ . — Այո՛ , չե՛նք ընդունիր :

ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ Գ . ԷՑ . — Ուրեմն ներկայութեան խնդիր չիկայ այլ եւս մեզ համար , այլ միայն փոխադարձ վստահութեան խնդիր :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս . ՓԱՇԱ . — (Պատասխանելով) Պի՛տի ապացուցանեմ . . .

ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ Գ . ԷՑ . — Բանի որ կըսեմ , փոխադարձ վստահութիւնն վերցած է , ուրեմն ինձ կը մնայ մեկնիլ :

(Չայս ասելով Նորատունկեան Գարրիէլ էֆէնտի կը մեկնի ժողովէն .)

ԱՍԼԱՆԵԱՆ Ս . ՓԱՇԱ . — Ի՞նչ կը նըշանակեն այս դարձուածքներն , Ատենապետ էֆէնտի : Համամտութեամբ բանաձեւ պատրաստել եւ ապա այնպէս մը ցոյց տալ թէ Քաղաքական ժողովոյ Ատենապետն անմասն է այդ պատրաստութեան մէջ եւ կուզեն Պէյին հաւանութիւնն ստանալ . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Ժողովս այս ինչ կամ այն ինչ պէյէն ստորակարգեալ չէ՛ :

ՁԱՅՆԵՐ . — Ապա ուրեմն ի՞նչ է :

ՁԱՆԱԶԱՆ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ . — Օրակարգ , Օրակարգի անցէք , Ատենապետ էֆէնտի :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա . ԷՑ . — Վսեմ . Ստեփան Փաշա արդէն բացատրեց ներքին Գործոց Նախարարութեան քեզքերէին իմաստն . Այդ քեզքերով կը յանձնարարուի մեզ նախ՝ Պատրիարքական ընտրութեան խնդրոյն մէջ անթերի հետեւիլ Ազգային Սահմանադրութեան տրամադրութեան եւ միանգամայն տեղեկութիւն հաղորդել իրեն ժողովոյ ներքին կանոնադրի նկատմամբ : (Վերստիկ կընթեռնու նախարարութեան քեզքերէն) 'Կը անսնէք ահա , Երեսփոխան էֆէնտիներ թէ ուզուածն պարզապէս տեղեկութիւն մ'է որ բընաւ ամբաստանութիւն չենթադրեր : Այս խնդիրն յայնժամ խնդրոյ նիւթ կը լինէր , երբ ուզուած բացատրութիւններն անգուհացուցիչ նկատուելու մասին վարչութիւնն երկրորդ ազդագիր մը ցոյց տար մեզ . միթէ կա՛յ այդ տեսակ գիր մը , ո՛չ . Ուրեմն յուզ-

ուելու եւ նորանոր խնդիրներ յարուցանելու տեղի չիկայ երբէք :

Սակայն կը տեսնեմք թէ Վարչութիւնն եւ իւր համախոհք օրինական թուոյ խնդիրն կը յարուցանեն մինչդեռ անցեալ նստին երբ նախորդ Քաղաքական Ժողովոյ Համարատուութեանն առթիւ դոհունակութեան քըռէ տրուեցաւ , որում մասնակցեցան ոչ-Ներսիսիան Քարաղամեան Տիգրան էֆէնտի եւ ոչ-Ներսիսիան Ոսկանեան Տաճատ վարդապետ , ընաւ չի յուզեցին այդ խնդիրն , թէեւ նոյն օրն ալ Ներսիսիանաց թիւն օրինական մեծամասնութենէ զուրկ էր :

Կառարկուի թէ վտանգ կայ . . .

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Վտանգ կայ ըսողներն են որ վտանգը յարուցանել կ'ուզեն :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Շարունակելով) Բայց ընաւ վտանգ չիկայ . այս խօսքերն պարզ սպառնալիքներ են մեզ դէմ : Եթէ իւրաքանչիւր Ազգային պաշտօնատարի պարտականութիւնն է իւր ամեն գործոց մէջ տառական կերպով հետեւիլ Սահմանադրութեան , ես եւս կրնամ հարցունել Վսեմ Սիմօն Պէյի թէ՛ ինքն ալ քանի՞ քուէով ընտրուած է անդամ Քաղաքական Ժողովոյ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Տասն եւ մէկ քուէով :

ԶԱՅՆԵՐ — Օրակա'րգ , Օրակա'րգ :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Բեմն ելնելով) Ո՞՞սք կուզեմ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԵՒ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԷՖ. — Ո՛չ , Օրակարգ :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Առ ընդմիջողըս) Ես Ձեզի դէմ չպիտի խօսիմ : Թոյլ տուէք ուրեմն որ խօսք առնեմ :

(Ընդմիջմունք)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ի ճայն զանգակի) Երբ Երեսփոխան մը օրինաւորապէս խօսք կառնու Դիւանէս եւ Բեմն կենէ , ոչ ոք իրաւունք ունի արգիլել զայն խօսելէ : — Իւթիւճեան էֆէնտի , խօսե'ցէք :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ինչպէս կը յիշեն Վսեմ Ստեփան Փաշա Ասլանեան եւ Ղազարոսեան Քրիստոստուր էֆէնտի , Սահմանադրութեան հաստատութենէն քիչ յետոյ , Ժողովս նկատելով որ 71 ներկայից օրինական թիւ գտնելն գրեթէ անհնարին կըլլայ , Պատրիարքն Բ. Դրան դիմելով արտօնութիւն խնդրեց ընտրելեաց կէսէն մէկ աւելիի ներկայութեամբ ատեան բանալու համար եւ արտօնութիւն առնուած էր . . . :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Այդ պատմութիւններն մեք Ձեզմէ աւելի լաւ գիտեմք Իւթիւճեան էֆէնտի :

ԶԱՅՆԵՐ — Պէտք չեղած խօսքեր մի' ընէք , Իւթիւճեան էֆէնտի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Էի ճայն զանգակի) Շարո'ւնակեցէք Ձեր խօսքն , Ատենաբան էֆէնտի :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Շարունակելով) Սակայն դարձեալ մեծամասնութիւն չգտնուելով , սովորութիւն դարձած էր որ նստի բացման պահուն , Բարապանք կ'երթային Երեսփոխանները գտնել եւ հրաւիրել որ գան ներկայութեան տումարը ըստորագրեն :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Մտիկ չե'նք կրնար ընել :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Պատասխանե-

լով) Իրաւունք չունի՛ք զիս խօսելէ արգիլե-
լու :

ՁԱՅՆԵՐ — Օրակա՛րգ , Օրակա՛րգ :

ԱՑԵՆԱՊԵՏ ԷՖ . — Խնդրեմ , Իւթիւճի-
եան էֆէնտի , համառօտեցէք Ձեր խօսքերն :

ԻԹԻԻՃԵԱՆ Կ . ԷՖ . — (Շարունակե-
լով) Այնպէս որ ներկայից իրական թիւը
չէր համապատասխանէր ներկայութեան տու-
մարին : Այս անպատեհութեանց առաջքն
առնելու համար , բարեյիշատակ Ռուսիեան
էֆէնտի օրինական եւ իսկական մեծամաս-
նութեանց տրամադրութիւններն մտցուց
ներքին կանոնադրին մէջ

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — (Վերստին
ընդմիջելով) Գիտենք , գիտենք , ալ բաւա-
կան է՛ :

ՄԻ ՔԱՆԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ — Դիտմամբ
խօսքը կերկարէ որ ժամանակն անցնի եւ չի
կարենամք Օրակարգին անցնիլ :

ՁԱՅՆԵՐ — Օրակա՛րգ , Օրակա՛րգ :

(Ատենարան էֆէնտի տեսնելով որ հա-
կառակ Դիւանի ազդարարութեանց , ընդմիջ-
մունք կը շարունակուին , կը պարտաւորի
թողուլ Բեմն :)

ԱՑԵՆԱՊԵՏ ԷՖ . — Թէեւ նստի փակ-
ման ժամը մօտեցած է , սակայն քանի որ Ե-
րեսօփոխան Տեարք Օրակարգի անցնիլ կա-
ռաջարկեն , մեր պարտքն է ըստ օրինի ձեռք
առնուլ Օրակարգն եւ խօսք տալ Երեսփո-
խանաց ց'որչափ ներէ ժամանակը :

ՁԱՅՆԵՐ — Այո՛ , Օրակա՛րգ , Օրակարգ :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա .


Երկամեայ համարատուութիւնն նախորդ
Կրօնական Ժողովոյ

ԱՑԵՆԱՊԵՏ ԷՖ . — Մեր Օրակարգն է՛
նախորդ Կրօնական Ժողովոյ համարատու-
թիւնն որոյ վրայ առաջին խօսքն Վսեմ .
Ստեփան Փաշա Ասլանեանինն է :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս . ՓԱՇԱ — (Գլուխը)
Տեարք իմ . — Նախորդ Կրօնական Ժողովոյ
գործոց մէջ կարեւորագոյնն՝ ըստ իս՝ Պէշիք-
թաշի Գերեզմանատան խնդիրն է , որ մե-
ծաւ իրաւամբ արժանի է մեր ուշադրու-
թեան . զի տեղի տուած է շարք մը կրօնա-
կան ընթանմանց եւ քաղաքական հետեւա-
նաց որ պէտք է լուսարանուին եւ հրաշակ-
ուին՝ առ ի զգուշութիւն ապագային :

Ազգային Ժողովն այս խնդրոյն վրայ
մասնաւոր իրաւունք մ'ալ ունի ծանրանա-
լու . զի իւր Վարչութեան դիմում ընկերուն
վրայ վայրկեան մը միջամտել է անոր կար-
գադրութեան եւ շրջանկատ իմաստութեամբ
ուղղութիւն մը տուել է նմա . եւ այժմ
պարտի ստուգել թէ իւր Վարչութիւնն հե-
տեւե՞ր է այն ուղղութեան , թէ սրտաւո-
րել է շեղիլ . եւ առ ի՛նչ :

Աւելի յառաջ չ'զայցած կը խօստովանիմ
սակայն թէ իրաւամբ կրնաք առտրիել ինձ
թէ Վարչութեան երրեակ մարմնոց կատա-
րած մեծ գործողութեան պատասխանատու-
ութիւնը ի՞նչ պատճառաւ կ'որոնեմ անոր
միայն մի մասէն , ա՛յն է Կրօնական Ժողո-
վէն : Բայց , Տեարք իմ , Քաղաքական Ժո-
ղովն անցեալ նիստին կատարեց իւր Համա-
րատուութիւն , եւ երկուց Ժողովոյ նախա-
գահ Պատկառելի Վարչապետն կանխաւ ստա-
ցել է Ձեր գոհունակութեան եւ շնորհակալ-



եաց քուէն. կը մնայ միայն առաջի մեր մի եւ եթ ժողով, որ այսօր կուգայ իւր կարգին ենթարկել զիւր արարքն մեր քննութեան. ուստի եւ ես ամենայն յարգանք նմա ստիպեալ եմ ուղղել իմ խորհրդածութիւններ եւ 'ի նմանէ խնդրել բացատրութիւն. մանաւանդ որ այս պատուական ժողով մասնաւոր դեր մ'ունեցած է սոյն խնդրոյն մէջ, եւ մինչեւ աստիճան մը անոր ելլից եւ հետեւանայ հեղինակ նկատուելու իրաւունք մ'ստացած :

Բայց, Տեարք իմ, խնդիրը փափուկ է. զի մէկ կողմէն մեր ժողովրդեան կրօնային զգացմանց շիութեք է, եւ միւս կողմէ աշխարհվարական նկատողութեանց կրնայ տեղի տալ. ուստի հարկ է շրջահայեաց խոհեմութեամբ խօսիլ եւ խորհրդակցիլ, որպէս զի բարուրք չ'ընծայենք շարամիտ կասկածանայ թէ մասնաւոր նպատակներու կը ծառայենք, թէ Ազգային Եկեղեցւոյ իրաւունքն զոհել կը նկրտինք քաղաքական դիտումներու եւ կամ անոր հակառակն, որ հաւասարապէս եւ բացարձակապէս հեռի են մեր սրտէն եւ մտքէն, զի մեք անհամար ապացոյցներով հաստատած ենք արդէն թէ գիտենք տալ զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ : Բաց յայսմանէ մասնաւոր պարտականութիւն մ'ունինք այս խնդրոյն քննութեան մէջ մեր սովորական եռանդը մեղմելու եւ ճշմարտութենէ չ'խոտորելով հանդերձ խօսքերնիս խնամով կշռելու. զի այն մարմին՝ որոյ արարքը պիտի քննենք՝ մեր ամենապատուական կղերին կը պատկանի, եւ պատկառելի անձնաւորութիւններէ կը բաղկանայ, եւ որ իւր Համարատուութեամբն փառաւոր ապացոյց մը կ'ընծայէ մեր Եկեղեցւոյ զաւակաց Քրիստոնէավայել եւ եղբայրական համերաշխութեանն սկսեալ 'ի Հովուապետէ մինչեւ ցյետին ժողովրդականն, եւ փայլուն նշան մը Սահմանադրական օրինաց պահպանութեան որոյ նախանձախնդրութեամբ վառեալ է :

Անցնինք այժմ բուն խնդրոյն :

1887 տարւոյ սկիզբն՝ Պէշիքթաշի Գերեզմանատան համար՝ որ կայսերական Պալատան առնթեր գտնուելով 65էն 'ի վեր պարտէզի ձեւով յարդարեալ անգործածելի կը մնար, Բարձրագոյն կամք յայտնուեր է Այլուր փոխադրութեան, տեղոյն փոխարէն տեղ եւ փոխադրութեան ծախքն եւս յԱրքունուստ հարուցանելու պայմանաւ. եւ Ազգային Վարչութիւնն, ի պատասխան կարծիք յայտներ է թէ ամուսնաց ոսկորներն այլուր փոխադրելն ա'յնքան չ'յարմարիր մեր ժողովրդեան կրօնական զգացման եւ հաւատալեացը. հետեւաբար նախադասելի կը թուի Գերեզմանատունն իւր դրից մեջ պարտելի վերածել : եւ այս առթիւ նախկին աղաչանքի մը կրկնութեամբ արտօնութիւն խնդրեր է Բերայի Գերեզմանատան հնացեալ Եկեղեցին նորոգելու եւ նոյն Գերեզմանատան մէջ մեռեալ չ'թաղուած տեղերն կալուածներ կառուցանելու. իբրեւ վարձ Եկեղեցւոյ եւ Գարոյին եւ Հիւանդանոցին :

Անմիջապէս ի պատասխանի այս գրոյն երկրորդ գիր մը կուգայ յԱրքունուստ, որով Վսեմափայլ Հրամանատարն Պալատան կը յայտարարէ թէ « Ամեն կրօնք կը ներեն ոսկերոտեաց փոխադրութեան, ինչպէս պատմութիւնն ալ կ'ապացուցանէ. ուստի անհասկանալի կը մնայ այն նպատակը որով կ'ըսուի թէ Հայկական ժողովրդեան կրօնական զգացմանցը կը հակառակի » եւ կը յաւելու թէ « Վեհափառ կայսրն չ'հաճիր որ նոյն Գերեզմանատուն պալատան կից աւերակ վիճակի մէջ թողուի կամ պարտիզի վերածուի. այլ բացարձակապէս կամք կ'ընէ որ ոսկերոտիքն եւ տապանաքարերն յարմար տեղ մը փոխադրուին եւ գետինն յանձնուի Արքունեաց : Եւ երբ Ազգն համակերպի ասոր, իբր փոխարինութիւն պիտի միջնորդեմ, կ'ըսէ, առ Նորին Վեհափառութիւն, որպէս զի արտօնութիւն շնորհէ Ձեզ 1. Բերայի Գերեզմանատան Բանկալթիի պողոտային վրայ ցոյց տրուելիք անթաղ տեղերն կալուածներ կառուցանել, 2. Մեքքեպի Հարպիլիյի Մա-

ճեթի կողմն նոր դպրոց մը հիմնել, եւ Յարդի Եկեղեցին իւր դրից մէջ նորոգել, եւ շնորհ ընէ միանգամայն գնել սոյն շինութեանց 'ի նպաստ բացուելիք հանգանակութեան տոմսակաց մի մեծագոյն մասն: Իսկ հակառակ պարագայի մէջ, կ'ըսէ, այսինքն եթէ Ձեր ժողովուրդը չ'հաւանի փոխադրել ոսկերոտիքն, այս պիտի նշանակէ թէ Հայ ժողովուրդը Օգոստոսիառ Սուլթանի կողմէն վայելած ա'յնքան շնորհաց փոքրիկ փոխարինութիւն մ'իսկ ընել չ'ուզէր:» Եւ նամակը կը վերջացունէ ըսելով թէ «ըստ որում Վեհափառ Կայսեր կամաց դէմ դժուարութիւն յարուցանելն չ'համաձայնիր հպատակութեան պարտաւորութեան, խնդիրն իւր բոլոր պարագայներովն նկատողութեան առէ'ք եւ անսխառմառ յաջող ելք մը տալով, հաղորդեցէք մեզ արդիւնքն»:

Այս շողշողուն եւ պատուական հրամանագրոյն ի պատասխան՝ մեր Վարչութիւնն Ազգային ժողովոյ որոշումն առնլէ յետոյ (ի նիստ 9 Փետրվար 1887) որ է «Ա. խնդիրը վերադարձունել Վարչութեան յանձնարարելով որ վերջին ջանք մ'ալ ընէ առանց ոսկերոտեաց փոխադրութեան զայն կարգադրելու. եւ Բ. եթէ չ'յաջողի, Գերեզմանատանց նուիրականութեան արժանաւայել պատկառանքն ու յարգանքը պահելով եւ Ազգային նմանօրինակ եւ այլ սեպհականութեանց պահպանութիւնն ապահովելով, Գոյացում տայ Օգոստոսիառ Կայսեր պահանջման, բացառիկ զոհողութեան հանգամանօք, յապացոյց սիրոյ եւ անձնուիրութեան Ազգին՝ առ թանկագին Անձն Ն. Վեհափառութեան»:

Փոխանակ ամենայն զգուշութեամբ զոհողութեան պէտքն ստուգելու եւ վաղընդփոյթ ճարտարապէս գործադրելու Ազգային ժողովոյ որոշումն, երեսնօրեայ տատանումէ յետոյ, այնպիսի թագրիւր մը կը մատուցանէ յԱրքունիս, որ Ազգային ժողովոյ որոշումն իբր իլամ շեշտելով եւ Գերեզմանատան գետնոյն յանձնումն յակամայից բռնադատեալ ցոյց տալով, տեղի կուտայ եւ

իրաւամբ փափկաբարբառ մերժողական պատասխանւոյ մը:

Քաղաքական ժողովն իւր համարատուութեան մէջ՝ հազիւ սքողեալ դժկամակութեամբ մը սոյն թագրիւրին եւ անոր նախատեսելի ձախող արդեանց պատճառ ցոյց կուտայ Կրօնական ժողովոյ անհամաձայնութիւնըն ընդ իւր եւ իբր վերջին զոհողութիւն՝ ձեռնպահութեան յայտարարութիւնն, եւ այսպիսի հանգամանաց մէջ Սրբազան Պատրիարքին վարանումն 'ի գործադրութիւն Ազգային ժողովոյ որոշման:

Բայց ասի խրատ չ'ըլլար. հազիւ տարի մ'անցած եւ ահա երրորդ գիւր մ'ալ կուգայ յԱրքունուստ, որով Կայսերական Պալատան Հրամանատարը կը հրաւիրէ զՊատրիարքարան «Պարսկել Պէշիքթաշի Գերեզմանատունն եւ ննջեցելոց ոսկերոտիքն փոխադրել 'ի Շիշլի, քանի՛ որ Հայաստանեայց Եկեղեցւոյ առջեւ սրբավայր համարուող Գերեզմանատուն մը ուրիշ տեղ (Զմիւռնիա) կրնայ պարպուիլ առանց խղճահարութեան»:

Ասոր մեր Վարչութիւնը նախ կը պատասխանէ թէ «արդէն յիշեալ Գերեզմանատունըն վեհափառ Կայսեր արամադրութեան ներքեւ դրուած է, եւ Զմիւռնիոյ դէպքին նկատմամբ արժանաւոր տնօրինութիւնն 'ի գործ պիտի դրուի ըստ օրինաց Եկեղեցւոյ»:

Եւ ապա Սրբազան Կաթողիկոսէն կոնդակ մ'ընդունելով 1888 Մարտ 25ին թագրիւր մը կը մատուցանէ յԱրքունիս, որով կը յայտարարէ թէ «Ազգին ընդհանրական Հայրապետը որ յիջմիածին կը նստի, լսելով որ Պէշիքթաշի Գերեզմանատան խնդիրն դեռ կ'երկարաձգի, մասնաւոր կոնդակաւ մը յորդորեր է զմեզ բացառաբար զոհել զԳերեզմանատունն Վեհ. Կայսեր սիրոյն. ուստի եւ մեք գամք խնդրել որ շնորհ ընէք ընդունիլ զայն եւն» եւ Վեհափառ Կայսրը հարկ չ'դատէր ընդունիլ այսպէս Կաթողիկոսական Ֆերվայով իրեն նուիրեալ ընծայն:

Այս պատմութենէն ակն յայտնի կերելի, Տեա'րք իմ, թէ Պէշիքթաշի Գերեզմա-

նատունն նուիրուեր է Արքունեաց, բայց այնպիսի կերպով մ'որ Ազգը գուրկ մնացեր է ամեն կողման գոհունակութենէ եւ բոլոր յուսացեալ բարիքէ: Վասն զի՝ նախ՝ մեր ժողովրդեան ակնածական զգացմունքն եւ խանդաղատանքն առ Բամբարանս իւր նախնեաց եւ սիրելեաց՝ կրօնային զգացմանց եւ հաւատալեաց կարգը բարձրանալու աստիճան բորբոքուած միջոցին, (եւ ես պաշտօն չ'ունիմ ասոր սկզբնապատճառն որոնելու), ո՛չ մէկ կողմէ եւ 'ի մասնաւորի Եկեղեցական դասու կողմէն բաւական ջանք չէ՛ եղեր զայն մեղմելու եւ օրինակներ ցոյց տալով զամենեսին համոզելու թէ « Արդարեւ մեր Եկեղեցին նուիրական վայր կը նկատէ մեր Գերեզմանատուններն եւ 'ի մասնաւորի կը յարգէ Սրբոց ոսկերոտիքն եւ մասունքն, բայց չ'արգելուր զանոնք այլուր փոխադրել ամենայն ակնածութեամբ եւ պատկառանօք՝ երբ հարկը պահանջէ, ինչպէս կ'ընեն ամեն Քրիստոնեայ ազգք, ինչպէս պատահած է եւ 'ի մեզ բազում տեղեր, ինչպէս արտօնած եւ իւրեանց ձեռօք իսկ կատարած են մեր նախնի եւ արդի չայրապետք, ինչպէս նոյն իսկ Ազգային Ժողովն իւր հանրական իրաւասութեամբ ընդունած է զայն սկզբամբ եւ յանձնարարած Վարչութեան 'ի գործադրութիւն »:

Ապա երբ խնդիրն ելեր է յատեան Ազգային Ժողովոյ, փոխանակ պարզ մտօք ճշմարտութեան հետեւելու եւ ազգային Եկեղեցւոյ շահը միայն նպատակակէտ ունելով, առողջ եւ ուղիղ դատողութեամբ խնդրոյն լուծումը դիւրացունելու, գիտէս թէ առաւել կնճռոտելու ջանք ըրեր են զարմանալի փաստարանութեամբ. օրինակի համար, մին ըսեր է թէ՝ « Հայոց Գերեզմաններն նուիրական եւ անխախտելի են, պէտք չէ ընկրկիլ ո՛ր եւ է նկատման առջին » միւսն ըսեր է թէ՝ « Ս. Նախնեաց վճիռն է Գերեզմանի կրնքոյ անշարժութիւնն եւ արդի Եկեղեցականութիւնն չ'ունի հեղինակութիւն զայն փո-

փոխելոյ »: միւս մը աւելի յառաջ գնալով համարձակեր է յայտարարել թէ՝ « Գերեզմանատուն զոհելն՝ կարապետ կը լինի մեր տաճարներն զոհելու » եւն. եւն (Տես, Ատենադրութիւն Ազգ. Ժողովոյ 9 Փետրվար 1887):

Ի՞նչպէս կարելի էր յուսալ, Տեա՛րք իմ, որ այսպիսի հրաբորբօք յայտարարութեանց առջին ժողովրդեան բուն զգացմունքն մեղմանային, ընդհակառակն՝ սրտերն այն աստիճան յուզուեր են որ մտքերն կորուսեր են իրենց ուղիղ դատողութիւն եւ Եկեղեցական Հարք իրենց ձեռօք իսկ միամտաբար բորբոքած բոցոյն առջին տեղի տալու ըստիպուելով յետս յետս ընկրկեր են մինչեւ այն կէտն, ուր չ'համարձակելով այլ եւս գործել ներգործաբար, պարտաւորեր են իրենց ձեռնպահութիւնը դնել Վարչութեան տրամադրութեան ներքեւ, իբրեւ վերջին գոհողութիւն. եւ Քաղաքական Ժողովն ի հարկէ շուարեալ եւ վհատեալ, Պատկառելի Վարչապետին հետ միայնակ, տատանումէ ի տատանում վերջապէս երկներ ծներ է այն քազրիքն որոյ արդիւնքն ծանօթ է, կ'ըսէ, հատու պերճախօսութեամբ իւր Տեղեկազրոյն մէջ:

Այս կէտին պէտք է հրաժեշտ տանք նախորդ Քաղաքական Ժողովին, որոյ հետ մինչեւ ցայս վայր պաշտօնավարեր է կրօն. Ժողովն, տարի մ'ալ արդի Քաղաքական Ժողովին հետ գործելու համար:

Արդ ըստ որում նախորդ Քաղաքական Ժողովոյ հաշիւը փակուած է արդէն, ըստ որում արդի Քաղաքական Ժողովն դեռ նոր հասաւ համարատուութեան պայմանաժամն, (Տե՛ս Սահմանադրութեան Յօդ. 61) մեզ կը մնայ առ այժմ համարատու կրօն. Ժողովոյ հետ միայնակ յառաջ վարել մեր քրննութիւնն եւ խորհրդածութիւններն, որոց դժբաղդաբար նիւթ չ'պակսիր նաեւ այս երկրորդ ժամանակամիջոցի համար:

Զի արդարեւ կրօնական Ժողովն բաւական ժամանակ խաղաղ եւ հանգիստ իւր

ձեռնպահութիւնը վայելելէ յետոյ, որ մը յանկարծ կ'ընդունի յԱրքանուստ, ինչպէս տեսանք այս երրորդ հրամանագիրն, որ վերստին կը բանայ իւր առջին Գերեզմանական փոսը՝ եւ այս անգամ կրօնական գործնական փաստերով պեղեալ. զի նոյն միջոցին Զմիւռնիոյ մէջ մէկ քանի գերեզմանաց սակերոտիքն այլուր փոխադրեալ, եւ առ այս՝ Առաջնորդին կողմէն արգելք չ'յարուցեալ լինելն առարկելով, Կայսերական Պալատան Վսեմ. Հրամանատարն կը հրամայէ պարպել Պէշիքթաշի Գերեզմանատունն եւ կրօնական ժողովն սաստիկ սրտայուզութեան մէջ կ'իյնայ եւ կը տագնապի թէ՛ եւ անճողոպրելի չէ՛ր այս տագնապ, զի տրամաբանութիւնն անդ պատրաստ էր միջոց ընծայել անոր փարատման, եթէ իրեն ձեռք կարկառող գտնուէր. կամ պէտք էր Զմիւռնիոյ Գերեզմանաց հայոցներն Եկեղեցական Օրինօք դատաստանաւ դատապարտել եւ վճիռն հաղորդել Վսեմափայլ Հրամանատարին՝ ի պատասխան իւր գրոյն, եւ կամ պարզապէս փութալ վաղվաղէլ սակերոտիքն ՚ի Պէշիքթաշէ փոխադրել ո՛ւր որ անկ էր, եւ գետինն յանձնել ո՛ւմ որ անկ էր: Բայց մեր կրօնական ժողովն յարմար չ'դատեր վարուիլ այսպէս. այլ զարմանալի զուգադիպութեամբ մ'այն օրերն ժամանող Կաթողիկոսական կոնդակէ մ'օգուտ քաղել կը փութայ եւ դժբաղդաբար ձեռնունայն կ'ելնէ այս երկրորդ անգամ. եւ խնդիրը կը մնայ դարձեալ տարտամ եւ անորոշ վիճակի մէջ մինչեւ ցայսօր:

Արդ, ըստ որում Ազգային Վարչութիւնըն այս խնդրոյն մէջ իւր ձախող ընթացքով, խնդրոյն բարւոք կարգադրութենէն ծագելիք այն ամեն բարիքներէ որ մի առ մի նշանակեալ են Կայսերական Պալատան Վսեմափայլ Հրամանատարին երկրորդ գրութեան մէջ, Ազգին զրկուելուն պատճառ կրնայ նկատուիլ,

Ըստ որում կրօնական ժողովն թէ՛ ժողովներու մէջ պաշտպանած կարծիքներովն

եւ թէ՛ Ազգային ժողովոյ որոշման գործադրութեան վայրկենին իւր ձեռնպահութեամբ մասնաւոր պատճառ հանդիսացած կ'երեւի խնդրոյն անյաջող ելից,

Ազգային ժողովն Սահմանադրական օրինօք իրեն վերապահեալ համարառութեան իրաւունքն խղճի մտօք ՚ի գործ դնելու համար՝ պարտաւոր է նախ բացատրութիւն խնդրել հետեւեալ հարցերու նկատմամբ եւ ապա արձակել զիւր վճիռ:

1. կրօնական ժողովն ի՞նչ պատճառաւ Ազգային ժողովոյ սրոշումն եւ յանձնարարութիւնն ի գործ դրուելու միջոցին՝ փոխանակ աջակցելու Քաղաքական ժողովոյ, իւր ձեռնպահութեամբ անոր ձեռնթափութեանը տեղի տուած է, ինչպէս կ'ը յայտնէ Քաղաքական ժողովն իւր Տեղեկագրով:

2. Արդեօք ի՞նքն ալ կը հաւատար ժողովրդեան գրգռեալ դատուն հետ թէ Գերեզմանք Եկեղեցական Օրինօք տուանց բացառութեան եւ ո՛ր եւ է պարտգայի մեջ անհպելի են:

3. Եթէ չէր հաւատար, ի՞նչ կարօտութիւն ունէր սոյն կարծեաց ջերմ պաշտպանութիւն ընել:

4. Իսկ եթէ կը հաւատար, ի՞նչպէս կարողացաւ վերջէն իւր համոզումը փոխել վեհ. Կաթողիկոսի կոնդակին վրայ:

5. Վերջապէս միթէ մեր Եկեղեցին կ'ընդունի՞ այնպիսի սկզբունք մ'որով ամեն ոք պարտաւոր լինի Կաթողիկոսին ո՛ր եւ է տնօրինութեանց համակերպիլ, թէ՛ եւ անհամաձայն ըլլան անոնք Եկեղեցւոյ Օրինաց եւ աւանդութեանց:

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅ. — Ընդհանուր տեսութիւն մ'ընելով նախորդ կրօնական ժողովոյ համարատուութեան տեղեկագրին վերայ, կը դիտեմ թէ իւր պաշտօնավարութեան միջոցին առ ինք ներկայացեալ 559 խնդիրներէն, որք կը վերաբերին տեղական, ամուսնական, անհատական եւ գաւառական գործոց, կրօնական ժողովն միայն 44 խնդրոց վրայ տեղեկութիւն բերած է Ազգային

Ժողովոյ, այնպէս որ կրնայ ըսուիլ թէ Կրօնական Ժողովն աւելի իրեն ներկայացեալ խնդրոց քանակութեան քան որակութեան ուզած է սեղեկացնել զԱզգային Ժողովն. սակայն կարծեմ թէ համարատուութիւն մը տարբեր հանգամանօք պիտի լինէր, երբ մանաւանդ կուգար Կրօնական Ժողովէ մը: Այժմ մեք բնաւ չպիտի իմանամք թէ ի՞նչ են այն միւս 511 խնդիրներն, որոց վրայ բացարձակ լուծիւն պահած է Կրօնական Ժողովն. գէթ գիտնայինք թէ այդ տեսակաւ միայն յայտնի խնդիրներն կ'արժէ՞ր խնդիր համարել, որպէս զի Ազգային Ժողովն ըստ այնմ կարենար բան մ'ըսել իւր նախորդ Կրօնական Ժողովոյ գործունէութեան մասին:

Մասնաւորապէս ամուսնական խնդրոց համար այս Ժողովոյ մէջ բաղձանք յայտնուած եւ որոշուած էր՝ նախկին Կրօնական Ժողովոյ մը համարատուութեան առթիւ՝ որ Կրօնական Ժողովք իրենց համարատուութեան կցեն ամուսնական խնդրոց վիճակագիր մը, թէպէտ ոչ յականէ յանուանէ, որով Ազգային Ժողովն կարենայ վերահասու լինել թէ քանի՞ ամուսնական բաժանմունք տեղի կ'ունենան առ մեզ՝ զոր օրինակ մէկ տարւոյ միջոցի մէջ, կաճի՞ն երթալով թէ կը նուազին. ի՞նչ վիճակի մէջ է մանաւանդ գաւառացի ազգայնոց ամուսնական կամ ընտանեկան բարոյականն՝ Մայրաքաղաքիս Հայոց ընտանեկան բարոյականին հետ համեմատելով: Կը տեսնուի թէ այդ տեսակ վիճակագիր մը կցուած չէ Կրօնական Ժողովոյ այս կարի համառօտ համարատուութեան հետ: Վսեմ. Նուրեան էֆէնտիի Քաղաքական Ժողովոյ համարատուութիւնն, որ այնչափ քննադատուեցաւ մինչեւ իսկ բաւական խստութեամբ, մանաւանդ սա առաւելութիւնն ունէր որ առ ինքն ներկայացեալ ամէն խնդրոց ցանկն, լուծեալ կամ անլոյծ, կը ներկայացնէր մեզ ի գիտութիւն: Բարեբախտապէս, երբ այս քանի մը սիւնակէ բաղկացեալ համարատուութիւնն մեծ լոյս մը չի տար մեզ մեր նախորդ Կրօնական Ժո-

ղովոյ գործունէութեան վրայ, ազգային գործոց ընթացքին ուշիւ հետամուտ եղող Երեսփոխանք գիտեն՝ թէ Կրօնական Ժողովն արդարեւ փոյթեալն զգործունէութիւն ցոյց տուաւ այն ազգային կէս մ'անիշխանութեան միջոցին, յորում Ս. Պատրիարքն հրատարած էր եւ արդի Քաղաքական Ժողովն դեռ չէր վաւերացած Բ. Դունկն. Գոհութեամբ դիտուեցաւ թէ այդ ազգային տազնապի միջոցին նախորդ Կրօնական Ժողովն պարտքէն աւելին կատարեց՝ ի հարկին խորհրդակցելով Ազգային Ժողովոյ Մայր-Դիւանին հետ, որպէս զի Ազգային գէթ ընթացիկ գործերն չլքուէին բոլորովին:

Այս դիտողութենէն յետոյ կանցնիմ համարատուութեան մէջ պարզեալ մի քանի խնդրոց քննութեան:

Ա. Կրօնական Ժողովն այցելու Տեսուչ մը կարգած է եւ Կրօնական ուսմանց համար դասագրքեր որոշած ազգային վարժարանաց մէջ գործածուելու յանձնարարութեամբ. ահա Կրօնական յանձնարարեալ դասագրոց ցուցակը. (ԿՐՆՔԵՈՒՆՈՒ զԱՅՆ): Կը տեսնէք, Տեսարք, թէ այս ցուցակին մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան դասագիրք չկայ: Մինչդեռ մէկ կողմանէ Կրօնական Ժողովն այդ ուսման տւանդման մասին այն աստիճան նախանձախնդրութիւն ցոյց տուած է որ մինչեւ անգամ՝ իւր իրաւասութեան սահմանէն անդին անցնելով՝ ձեռն կը ձգէ ի Ռուսիա եւ Ս. Կաթողիկոսին կը հարցնէ թէ՛ ստոյգ է որ Ռուսիոյ ազգային վարժարանաց մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութիւնն եւ կրօնի ուսումնի Ռուսերէն լեզուաւ կաւանդուին, մինչդեռ զանազան քրիստոնէականաց գործածութիւնըն կ'արտօնէ Թուրքիոյ ազգային վարժարանաց մէջ, միւս կողմէ ի բաց կը թողու Տ. Մեղքիսեղեկ Ս. Արքեպիսկոպոսի յօրինած Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան դասագիրքն: Ի՞նչ է արդեօք այդ դասագրքին ի բաց թողուելուն պատճառն: Չի կրնար ըսուիլ թէ կրօնապէս արգելք մը կայ այդ դասագրքին ընթերցման դէմ:

վասն զի պէտք է գիտել թէ յիշեալ դասագիրքն Ս. Երուսաղէմի Պատրիարք հոգեւոյս Եսայի Սրբազանի հրամանաւ տպագրուած է. բայց աստի, կը հաւաստեմ Ձեզ, Տեարք, թէ արդի Ս. Կաթողիկոսն, երբ դեռ Պետարապիոյ Առաջնորդ էր, յատուկ նամակաւ մ' ուղղեալ տա Եսայի Պատրիարքն՝ կը խնդրէ Նորին Սրբազնութենէն իւր կողմանէ ճակատն համբուրել Հայաստանեայց Եկեղեցւոյ Պատմութեան Հեղինակին, դեռ յայնժամ Մելքիսեդեկ վարդապետին որ Երուսաղէմ կը գտնուէր: Երջանկայիշատակ Տ. Գէորգ Կաթողիկոսն ալ իւր բարձր հաւանութիւնն յայտնած էր այդ դասագրքին համար: Իսկ եթէ քաղաքական արգելք մը կար այդ գրքին գործածութեան դէմ, գուցէ թիւրիմացութեամբ կամ թիւր մեկնութեամբ, Կրօնական Ժողովս ի՞նչ միջոցներ ձեռք առած է արդեօք այդպիսի արգելք մը բառնալու համար զուտ եկեղեցական դասագրքի մը գործածման դէմ յԱզգային վարժարանս, դիմելով ուր որ անկ էր: Եթէ ոչ այս կամ այն, ապա իրաւամբ կրնայ կասկածուիլ թէ Տ. Մելքիսեդեկ Սրբազանի յօրինած Հայաստանեայց Եկեղեցւոյ Պատմութեան դասագրքին՝ Կրօնական դասագրքոց ցուցակէն ի բաց թողուելուն պատճառն նոյն իսկ Սրբազան Հեղինակին անձնաւորութիւնն էր: Փախաքելի է յոյժ լսել Կրօնական Ժողովոյ բացատրութիւնն յայսմ մասին:

Բ. — Կրօնական Ժողովն կը ձեռնարկէ Կրօնական թերթի մը հրատարակման մեծամեծ խօստումներով. բայց վարմանալի դիպուածով մը, զԿրօնական Ժողովն կը կանխէ մի ուրիշ ազգային Պ. Թորոս Չուղայեցի, մի քանի ամիս յառաջ ի լոյս հանելով իւր Կրօնական թերթն: Կրօնական Ժողովն աշխարհական անձի մը այս անակնկալ նախաձեռնութենէն իրաւամբ ի նախանձ շարժեալ՝ այլ եւս կը փութացնէ իւր թերթին հրատարակութիւնն, եւ ահա մի եւ նոյն ժամանակ կը սկսին հրատարակուիլ կրկին Կրօնական թերթեր, բնականապէս իրարու դէմ

մրցելով: Բայց Խօսնակն վերջապէս կը լռեցընէ զՀայաստանեայց Եկեղեցին, որ ընթերցողի սովէն կը պարտաւորի քաշուիլ հրապարակէն՝ տեղի տալով Կրօնական Ժողովոյ Խօսնակին, որ քիչ ատենէն պիտի հետեւէր նմա դէպ ի լուծիւն: Այսպէս Կրօնական Ժողովոյ Հանդէսն, որ « Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ առաքելականութեան, ընդհանրականութեան եւ ուղղափառութեան » քարոզ պիտի լինէր, որ « Ժողովրդեան մէջ մտւտ գտած մոլութիւններն առիթ առնելով... » պիտի ուսուցանէր թէ « Ի՞նչ է Քրիստոնեայ լինելը, թէ ի՞նչու Քրիստոնեայ կը լինի մէկը, թէ ի՞նչ պէտք է Քրիստոնէական կեանք վարած ըլլալու համար... » այլովք բաղմօք հանդերձ, եղբրական վախճան մ' ունեցաւ յանկարծ. օրին մէկը Կրօնական Ժողովն յանկարծ թողուց նորա հրատարակութիւնն, եւ այն հրեղէն սիւնն որ Հայաստանեայց Եկեղեցւոյ որդւոց պիտի առաջնորդէր Յաւիտեան Երկիրն՝ օրին մէկն իջաւ յանկարծ Վասիորի ջերերուն մէջ եւ մարեցաւ, եւ գիտէք թէ ածուխն յետոյ ո՞րու ձեռք մնաց:

Պապական արշաւանքին ժամանակ, որ կ' ուղղուէր ի ձեռն Ազարեան Պատրիարքին, Կրօնական թերթին մարտիկներն խոյս տուած էին մարտկոցներէն, եւ Եկեղեցւոյ դէպ ի սիրան ուղղուած այդ Հռովմէական արշաւանքն գուցէ կարենար քանի մը քայլ առնուլ դէպ ի նպատակն, եթէ նախ Ազգային Մամուլն, մասնաւորապէս Արեւիք եւ Մանգումէ, դարձեալ Հայրեմիք եւ Փոսնջ, եւ ապա քանի մը պատուական եկեղեցականք, ի գլուխ որոց Տ. Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրատեանց, կորակոր չ'վանէին ի բաց այդ անդրալեռնական արշաւանաց ազգասէ՛ր ախոյեաններն: Ձեռք ցաւիր կրօնական Ժողովոյ թերթին կորստեան վրայ, զի մեծ բան մը չ'չահեցուց մեզ, որպէս զի կորուստն ալ դառն լինէր. բայց կ'ողբանք որ Ազգային Կեդրոնական Վարչութեան կրօնական Ժողովն թերթի մը հրատարակութեան կը սկսի եւ ապա չ' ուզեր շարունա-

կել զայն : Կը խօստովանիմ թէ , եթէ Նուրեան Վարչութիւնն թերթ մը հրատարակել ձեռնարկէր , Նիւեօրթ-Հերալտի չափ կրնար զայն ծաղկեցնել եւ տարածել :

Գ. Կրօնական ժողովն յատուկ շրջաբերականաւ հրահանգ զրկած է գաւառական խաղաղային Իշխանութեանց , որոչէս զի աղջկանց վարժարաններ հաստատեն այն գաւառաց մէջ յորս դեռ չկան այդպիսի հաստատութիւնք : Բայց ինձ կը թուի թէ այդ հոգածութիւնն չի յարմարիր Կրօնական ժողովոյ իրաւասութեան , եւ Ուսումնական Խորհրդոյ պաշտօնն ու գործն է վարժարանաց հաստատման հրահանգ զրկել ուր ուրեք որ հարկ է , եւ ոչ Կրօնական ժողովոյ , որ կրնար իւր իրաւասութեան պատկանեալ վանօրէից մէջ հաստատել տալ Ընծայարաններ , կամ առ առաւելն՝ կրնար յորդոր մ'ուզղել աղջկանց վարժարաններու հաստատութեան համար , այն ալ աւելի իւր Կրօնական թերթին մէջ , եւ ոչ առ այդ յատուկ շրջաբերական հանելով ի գաւառս :

Դ. Կրօնական ժողովն Հայ Եկեղեցւոյ վիճակին վրայ պարբերաբար տեղեկութիւններ տալով Ս. Կաթողիկոսին՝ Նորին Ս. Օծութեան խորին ուշադրութիւնն հրաւիրեր է ի բարձունս « Հոգեւոր վտանգին » : Ի՞նչ է արդեօք այս հոգեւոր վտանգն . ի՞նչ պատասխան ստացաւ արդեօք Ս. Կաթողիկոսէն . ալ հիմայ չկա՞յ արդեօք այդ հոգեւոր վտանգն : Կրօնական ժողովն բան մը չըսեր այս մասին յանդորրութիւն Երեսփոխանաց սրտերուն :

Ե. Նախորդ Կրօնական ժողովոյ եկեղեցական նախանձախնդրութեանց մէջ չի տեսնուիր բնաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ միութեան պահպանման համար ձեռնարկութիւն մը յուղղութիւն ածելու Սոսյ եւ Աղթամարայ Կաթողիկոսներն , որք ի սկզբանէ անտի չեն յիշատակեր Ամենայն Հայոց Հայրապետին անունն Ս. Պատարագի մէջ . մի-թէ սա չէ՞ հոգեւոր վտանգն ընդդէմ Եկեղեցւոյ միութեան , որում յաճախ կը սպառ-

նան Աղթամարայ բայց մանաւանդ Կիլիկիոյ նման բազմաչափ վիճակի մը Կաթողիկոսունք : Խորհեցէք , Տեարք Երեսփոխանք , թէ Կիլիկիոյ 200,000 Հայերն այսօրուան օրս չեն լսեր Ամենայն Հայոց Հայրապետի անունն ի Պատարագի , զի Տ. Մկրտիչ Կաթողիկոս ջանահար եղած է ի սկզբանէ անտի ուժացընելու իւր հօտն Ս. Էջմիածնի մեծ փարախէն : Բայց ո՞ր Կրօնական ժողով կամ ո՞ր Պատրիարք եկած ըսած է մեզ մինչեւ ցարդ . « Հայոց Երեսփոխանութիւն , գիտցիր որ Սոսյ եւ Աղթամարայ թոյլատրեալ Կաթողիկոսութեանց Փահակալք վտանգ կը սպառնան «Ս. Եկեղեցւոյ միութեան դէմ . տե՛ս թէ զի՞նչ պիտի ընես : » Ո՞չ ապաքէն , Տեարք , այդ սպառնալեաց դէմ մտածուած միջոցներն են՝ Հայոց ընդհանրական Կաթողիկոսին տիտղոսաց վրայ վերջամուտ յաւելուածք , որպէս են Ամենայն Հայոց , Համագային , Նախամեծար Մայր Աթոռոյ Մայրագոյն Պատրիարք եւ այլն , ուր գիտենք թէ առ նախնիս մեր Եկեղեցւոյ հովիւն կը կոչուէր միայն , Կաթողիկոս , Հայրապետ , շոգեւոր տէր , եւ բնաւ չկային այնպիսի օտարոտի վերադիրներ որ այժմ մուտ գտած են առ մեզ : Երբ յիշատակութեան այս կամ այն նորամուտ բառին համար այնքան նախանձայուզութիւն ցոյց կը տրուի զարդիս , արժա՞ն չէր միթէ որ Կրօնական ժողովն ի նկատ առնուր Սոսյ եւ Աղթամարայ արդի Կաթողիկոսաց հակազգային ընթացքն , եւ խնդիր բերէր Ազգային Երեսփոխանութեան :

Զ. Վերջապէս Կրօնական ժողովն՝ պահ մը կարեւորութիւնն եւ օգուտն իրար ըջփոթելով՝ գրեր է առ Ս. Կաթողիկոսն եւ խնդրեր է Աստուածաշունչ մատենի ի նորոյ տպագրութիւնն ի Ս. Էջմիածին , դիտել տալով թէ՛ Ոսկանեան տպագրութենէն զատ երբէք Ազգն Աստուածաշունչ տպագրելու ձեռնարկած չէ :

Իրաւ է թէ 1666 ին առաջին անգամ տպագրուած է Աստուածաշունչ գիրքն յ'Ամսդերտամ ի ձեռն Երեւանցի Ոսկան Վարդապետի . բայց այդ տպագրութիւնն չէ

առնուած ընտիր ձեռագիրներէ, վասն որոյ սխալագիր եւ թերի է յոյժ, մինչեւ իսկ Ռսկան Վարդապետ ինքն ալ Հատիներէնէ թարգմանելով՝ ամբողջացնել ուզեր է ձեռագրին ինչ ինչ թերի մասերն. Մինչեւ ցարդ ի Վենետիկ չորս անգամ ի լոյս ելած է Ս. Գիրքն՝ հետ զհետէ աւելի ուղղագոյն տպագրութեամբ, այնպէս որ Ռսկանեան տպագրութիւնն իբրեւ նախընծայ տրպագրութիւն միայն ունի արժէք այսօր, եւ ոչ իբրեւ ընտիր օրինակ Աստուածաշունչ գրոց. եւ երբ այնքան տարիներէ ի վեր Վենետիկեան տպագրութիւնն կը գործածուի Աղգին մէջ թէ յեկեղեցիս եւ թէ ի դպրոցս, ի՞նչ հարկ վերստին տպագրութեան ձեռնարկելու խնդիրք ընել ի Ս. Էջմիածին, այնքան մեծածախ գործի մը որ՝ թէպէտ ոչ ամենեւին անօգուտ՝ առ այժմ անհարեւոր է բոլորովին .

Այս դիտողութիւններս ներկայացնելով նախորդ Կրօնական Ժողովոյ համարատուու-

թեան ինչ ինչ -կէտերուն նկատմամբ՝ կը յուսամ լսել սակայն գոհացուցիչ բացատրութիւններ յատենի Ազգային Ժողովոյ .

ՁԱՅՆԵՐ — Շա՛տ լաւ, շա՛տ լաւ .

ԱՏԵՆԱԳՅՑ ԷՅ . — Կրօնական Ժողովոյ համարատուութեան մասին լսելէ յետոյ ՎԵՍԷՄ. Ստեփան Փաշայի ինչպէս նաեւ Գուրգէն Էֆէնտիի դիտողութիւններն, խնդրոյն վրայ վիճարանութեան շարունակութիւնը կը թողումք յաջորդ նստին, ըստ որում նստի վիակման ճիշտ որոշեալ ժամն հասած է .

Ատեանն կը վերնայ ժամ 10ին յաջորդ նիստն Ապրիլ 21ին գումարելու որոշմամբ .

Ատենադպիր	Ատենապետ
Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ	Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ



ԱՁԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՆՆԵՆԻՆԻ

Ա. Վիճակ

- 1 Մկրտիչ Արքայ. Խրիմեան Բ
- 2 Սիմէօն Եպս. Սէֆէրե. Բ 3
- 3 Գէորգ Վ. Իւթիւճեան Բ 4
- 4 Սաշատուրի. Գարրիէլեան

Բ. Վիճակ

- 5 Խորէն Արքեպ. Նարայէ յԲ 2
- 6 Հմայեակ » Դիմաքսե. Բ 9
- 7 Յովսէփ Վ. Սարաճեան Բ 4
- 8 Արիստակէսի. Մամբրէեի

Գ. Վիճակ

- 9 Գարեգին Ե. Սրուանձտե
- 10 Յակոբ Վ. Փափաղեան Բ
- 11 Յովհ. Բհ. Շահապաղե.
- 12 Սահակ » Սարգսեան Բ 4

Դ. Վիճակ

- 13 Եղիշէ Վ. Այլաղեան Բ 9
- 14 Յովհ. Վ. Արշարունի Բ 2
- 15 Վահան Բ. Գրիգորե. Բ 3
- 16 Կարապետ Ս. Սէթեան

Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վ. Այլաղեան Բ 9
- 18 Գարեգին Վ. Թաթարե. Բ 5
- 19 Սուքիասի. Ստեփանե. Բ
- 20 Գարրիէլի. Սանճեան Բ

- Բ Բացակայութիւն առաջին
- 2 » երկրորդ
- 9 » բանաւոր պատճառաւ

ԱՇԽԱՏԱԿԱՆ

Ա. Վիճակ

Գում-Գարու, կեօիկ փաշա
եւ Գում-Գարուի դուրս

- 21 Յակոբ Գուրգէն
- 22 Մինաս Չերազ
- 23 Խաչիկ Կամսարական Բ 5
- 24 Միհրան Վարդազարե. Բ
- 25 Մկրտիչ Կիւրճեան Բ 9
- 26 Երամ Ճենաղեան Բ
- 27 Սարգիս Աղաբէգեան
- 28 Գրիգոր Ալեանաքեան Բ 3
- 29 Աւետիս Սուրէնեան
- 30 Խաչիկ Մանեասեան Բ
- 31 Յարութիւն Մօստիչեան Բ
- 32 Պօղոս Պառնասեան
- 33 Տիրան Նազարեան
- 34 Ստեփան Ասլանեան
- 35
- 36
- 37

Բ. Վիճակ

Պէշիկքաշ

- 38 Մաքսուտ Խիւտալէրտեան
- 39 Վահրամ Տատեան Բ 4
- 40

Եկնի-Գարու

- 41 Մարուգէ Ֆրէնկեան Բ 2
- 42 Պօղոս Էնքսէրճեան Բ 2
- 43 Յակոբ Պօշնակեան
- 44

Իւսկիւտար Ս. Խաչ

- 45 Գասպար Գասպարե. Բ 3
- 46 Մարտիրոս Գօլօլեան Բ

47 Թազուր Համամճեան Բ

48 Բարսեղ Աւետիսեան

Իւսկիւտար Ս. Կարապետ

- 49 Պօղոս Թորգոմեան Բ 6
- 50 Տրդատ Փափաղեան
- 51 Յակոբ Հաճեան
- 52 Միհրան Սէթեան

Գ. Վիճակ

Գարս-փաշա

53 Պապի Պապօեան

Բերա

- 54 Գրիգոր Սէլիմիյէճե. Բ
- 55 Ղազար Հովուեան
- 56 Յարութիւն Պէկեան
- 57 Նշան Պօյաճեան
- 58 Վիշէն Օրմանեան Բ 9
- 59 Սիմեօն Երիւմ Մանուկե. Բ 6
- 60 Համբարձմ. Մազպուլ. Բ
- 61
- 62

Միջագիւղ

- 63 Տիգրան Եուսուֆեան Բ
- 64 Մկրտիչ Գաղանճեան Բ 6
- 65 Ստեփան Տամատե. Բ 2
- 66 Յար. Նորատունկեան Բ
- 67 Գէորգ Շնորհքեան Բ

Պէյֆօզ եւ Ղալաթիա

68 Միքայէլ Մամիկոնե.

Դ. Վիճակ

Քուզկուցնուք եւ Ինճաթիք

- 69 Մկրտիչ Մէզպուրեան
- 70 Սիմօն Մաքսուտեան

Գատրգիւղ
 71 Կարապետ Հազարեան Բ 7
 72 Մկրտիչ Մանուկեան Բ 2
 Նարյր-Գարու
 73 Մինրան Տէօքմէճեան Բ 2
 ԵՒՅԻ-Մանալէ Սամարիոյ
 74
 Թօք-Գարու
 75 Յարուժիւն Թիրեաքեան
 Էյուպ Ս. եղիա եւ Ս.
 Աստուածածին
 76
 Գուրու-Չէշմէ
 77 Կարապետ Սըվաճեան Բ
 Հիսար եւ Պօյանի-Գիւղ
 78 Արամ Մարկոսեան Բ 5
 Նոր-Գիւղ եւ Սքէնիա
 79 Սեպուհ Տէմիրճիպաշե. Բ2
 Պալատ
 80 Մկրտիչ Կիւմիւշեան
 81 Ռէթէոս Թաղէոսեան
 82 Ներսէս Երէցեան
 Քարակէօմքիւկ
 83 Յովհաննէս Թորոսեան Բ 9
 84 Կարապետ Փանոսեան
 Ե. Վիճակ
 Սամարիա
 85 Յակոբ Արշակ Բ 4
 86 Յովհաննէս Նուրեան
 87 Գաբրիէլ Նորատունկ.
 88 Գառնիկ Արշաւիր Բ 2
 89 Յակոբ Ոսկան
 90 Պարգեւ Փափաղեան
 91 Կարապետ Քէրէստէճե. Բ2
 92 Յովհաննէս Կրճիկեան Բ2
 93 Գրիգոր Ալշըճեան
 94
 Խասգիւղ
 95 Ռուբէն Պուլիուրեան
 96 Նշան Փափաղեան Բ 2
 97 Ռէթէոս Պէրպէրեան
 98 Բարսեղ Հալաճեան Բ 6
 99 Յովակիմ Յովակիմեան
 100 Աբիկ Ունճեան Բ 6

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
 Ա. Վիճակ
 Զմշկածագ
 101
 Գաղատիա
 102
 Ատանա
 103
 Աղերդ
 104 Մատթէոս Ալէքսանե. Բ9
 Եօզղատ
 105
 Մալաթիա
 106 Գէորգ Վարդանեան
 Իգմիր
 107
 Եգիպտոս
 108 Արրահամ Մուրաանե Բ7
 Բ. Վիճակ
 Պրուտա
 109 Քրիստոստուր Ղազարոս.
 Եղուկիա
 110 Տիգրան Ճգնաւորե Բ4
 Եղեսիա
 111 Յակոբ Իւթիւճեան Բ
 Մանքրլիս
 112
 Հանրն
 113
 Երզնկա
 114
 Ամասիա
 115 Համբարձ. Ալաճաճ. Բ
 Բալու
 116
 Գ. Վիճակ
 Կարին
 117 Սերովբէ Ազնաւորե.
 Քէօթանեա
 118 Աւետիս Բընկրեան
 Ադրիանուպօլիս
 119 Յակոբ Պարսեան Բ 3

Նիկոմիդիա
 120 Կարապետ Ս.Իւթիւճ.
 Ակն
 121 Յովհաննէս Պօյանեան Բ
 Ղարահիսար
 122 Կարապետ Երէցեան Բ 2
 Արաբկիր
 123 Կարապետ Միրիճանեան
 Բաղէշ
 124 Արիւիար Արիւիարեան
 Գ. Վիճակ
 Քէփրտաղ
 125 Տիգրան Գ.Սինանեան Բ3
 Կիսարիա
 126 Յովհաննէս Պալըքճեան
 Խարբերդ
 127
 Պալրեւէր
 128 Ստեփան Գօլօլեան Բ
 Մուշ
 129
 Տիւրիկ
 130 Նշան Գարազաշ Բ
 Զէյթուն եւ Մարաշ
 131
 Տրապիզօն
 132
 Ե. Վիճակ
 Պաղտատ
 133 Կարապետ Սէթեան Բ 5
 Տիգրանակերտ
 134 Մինրան Զօպանեան Բ
 Վան
 135 Մարկոս Աղարէգեանց.
 Ադրամար
 136
 Հայէպ եւ Այնթապ
 137
 Սերաստիա
 138 Մկրտիչ Յ. Մէլիքեան
 Ռուսնուզ
 139
 Բարբերդ
 140

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Վ. Ա. Ր. Զ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

ԱՆԴԱՄՔ ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Տ. Խորէն	Արք-Եպիսկոպոս	Նար-Պէյ
2.	» Սիմէոն	Եպիսկոպոս	Սէֆէրեան
3.	» Գարեգին	»	Սրուանձտեանց
4.	» Յովսէփ	Վարդ.	Այվազեան
5.	» Յովհաննէս	»	Արշարունի
6.	» Յակոբ	»	Փափազեան
7.	» Վահան	»	Յակոբեան
8.	» Տաճատ	»	Ոսկանեան
9.	» Վահան	»	Տ. Մինասեան
10.	» Սահակ	Քահ.	Սարգսեան
11.	» Յովհաննէս	»	Մկրեան
12.	» Գրիգոր	»	Աճէմեան
13.	» Սուքիաս	»	Ստեփանեան
14.	» Կարապետ	»	Սեթեան

ԱՆԴԱՄՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Սիմոն	Պէյ	Մաքսուտեան	(Ա. Ատենապետ)
2.	Իլիաս	Էֆէնտի	Զայեան	(Բ. »)
3.	Կարապետ	»	Սըվանեան	(Ա. Ատենաղպիր)
4.	Յովհաննէս	»	Թորոսեան	(Բ. »)
5.	Գաբրիէլ	»	Գաբրիէլեան	
6.	Գրիգոր	»	Մարկոսեան	(վախճանեալ)
7.	Խաչիկ	»	Հանեան	
8.	Կարապետ	»	Հազարեան	
9.	Կարապետ	»	Փափամանեան	
10.	Մանուկ	»	Ասլանեան	
11.	Յովհաննէս	»	Ազնաւորեան	
12.	Պատրիկ	»	Կիւլպէնկեան	
13.	Սահակ	»	Ապրօ	
14.	Սարգիս		Աբրամեան	

ԵՐԿԱՄԵԱՅ ԵՂՄՏԱՑՈՅՑ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻ

1888-89 ԵՒ 1889-90 ԱՄԱՑ

	ՆԱԽ ԵՂՄՏԱՑՈՅՑ	ՆՈՐ ԵՂՄՏԱՑՈՅՑ		ՆԱԽ ԵՂՄՏԱՑՈՅՑ	ՆՈՐ ԵՂՄՏԱՑՈՅՑ
Ազգային ուղղակի տուրք	200000	200000	Սրբազան Գաորիարք	60000	60000
Դաւառական Մուգաթայ	110930	90000	Պաշտօնեայք	241800	252000
Թաղային Բանչէլէր	28700	28700	Հիւանդանոց, նշանտուութեան հասութից կէսը	35000	35000
Ճանապարհորդաց անցազիր	50000	30000	Անցազրի ամբողջ հասոյթը	50000	30000
Հիւանդանոց, ծախուց փոխարինութիւն	6000	6000	Նպաստ կարօտելոց	16000	12000
Առուծախի իմուխապէր	70000	90000	Յարաբերութեան ծախք	14000	12000
Նշանտուութիւն	70000	70000	Հեռազիր եւ թղթատար	10000	7000
Հրամանի	20000	20000	Գրական պիտոյք	8000	6000
Դիւանական եւ դատական	16000	17000	Տպագրութիւնք	8000	4000
Կոնդակազին	1500	5000	Ազգային ժողով	25000	20000
Պաշտօնաթուղթ եւ ծանուցագիր	1500	5000	Հովուական ծախք	24000	20000
Վազֆի հասոյթ	5000	5000	Կրթական »	24000	20000
Զանազան »	5000	5000	Նշանի »	3500	3500
			Փայտ եւ ածուխ (տուրճ, շաքար եւլն)	5000	5000
			Կարասի եւ նորոգութիւն	10000	6000
			Հանդերձազին	5500	4500
			Զանազան եւ պատահական ծախք	13000	10000
			Լրագրաց բաժանորդագին	2500	2500
			Հաւաքչաց ամսականք եւ տասանորդ	19200	14000
				574500	523500
			Հասութից առաւելութիւն		48200
	584630	571700		574500	571700

Ատենապետ
Քաղաքական ժողովոյ
Ս. ՄԱԲՍՈՒՑԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. — Բացակայութիւն .
2. — Առաջարկութիւն Յ. Գուրգէն էֆէնտիի Սրբոց Թարգմանչաց յիշատակի տարեկան տօնն ի դպրոցս Թուրքիոյ կատարելու մասին .
3. — Առաջարկութիւն Ղազարոսեան Ք. էֆէնտիի Երրորդ վիճակաւ դադարեալ Երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութիւն կատարելու մասին .
4. — Դիտողութիւն Սուրէնեան Ա. էֆէնտիի, Ժողովոյ Ատենագրութեանց հրատարակման յապաղման մասին .
5. — Հարցում Սուրէնեան Ա. էֆէնտիի, Տ. Մելքիսեդեկ Արք-Սպիսկոպոս Մուրատեանցի քարոզութեան առթիւ տեղի ունեցած ձերբակալութեանց մասին .
6. — Ելմտացոյց 1888—89 եւ 1889—90 ամաց Ազգ. Կեդրոնական Սնտուկի եւ Տեղեկագիր Քաղաքական Ժողովոյ .
7. — Խնդիր Երեսփոխանաց մեծամասնութեան .

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. — Երկամեայ Համարատուութիւն նախորդ Կրօնական Ժողովոյ .